

1

7-27

01 JUL 2009



$$\begin{array}{r} 1 \\ 2-27 \\ \hline \end{array}$$

2 U. 3 4 5 6

ԸՆՏԻՐ ՄՏՔԵՐ

*In orange running deer, blue
Swampy in the blue distance
deep green in the purple.*

ԳԵՐՄԱՆԵՐԷՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԱՐՇԱԿ ԵՖԻԳԱՐԵԱՆ

Þ þ ð ʟ ʰ ʋ

ԷԼԷՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑ.
1909

29



Սմբատ Շահագիզի յիշատակին

Քեզ, քո սուրբ յիշատակիդ, իմ անմոռանալի ուսուցիչ, նուիրում եմ անմահ Հայնէի՝ քո սիրած բանաստեղծի «Ընտիր մտքեր» գրքոյկս։ Այն խղճուկ հայերէնը, մայրենի լեզուս, որ գիտեմ, քեզ եմ պարտական, ուստի ընդունիր այս փոքրիկ գրքոյկը, որպէս առհաւատչեայ իմ երախտագիտութեան և այս «Ընտիր մտքերը» ընտիր անուշահոտ ծաղիկներէ փոխարէն ցանում եմ բանաստեղծիդ գերեզմանի վրա։

Միշտ երախտագէտ քո աշակերտ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈՆԱՐԷՆ.

Ներկայ գրքոյկը, որ պարունակում է բանաստեղծ Հայնէի «ընտիր մտքերը» հրատարակելու առիթ տուաւ մեզ տ. Գիւտ ա. ք. Աղանեանը, որի խմբագրութեամբ լոյս տեսնող «Լուսնայ» հանդիսի 1902 թվականի համարներում մասամբ տպագրուեցին մի քանիսը այդ մտքերից. իսկ մեծ մասը մնաց չտպագրուած և տ. Գիւտը բուռն շնորհակալութեան արժանի խնամքով երկար տարիներ պահպանել էր ձեռագիրը: Այդ մտքերի մի փոքրիկ մասն էլ տպագրուեց 1903-թ. «Տարազի»-ի համարներում: Երանի թէ մեր նախկին և այժմեան խմբագիրներէից շատերը բարձր. տէր Գիւտի գեղեցիկ օրինակին հետեւելու առաքինութիւնը ունենային: Որպէս մայրենի գրականութեան ամենայնոյն սիրող եւ ասպարէզ գալիս, որպէս և 10-15 տարի առաջ իմ հրատարակած հետեւալ գրքոյկներով¹⁾ Ձօն Լերբօկի «100 ամենալաւ գրքեր», ²⁾ Դիկկենսի «Վերագարծրած յանցաւորը», ³⁾ Բեօրնսօնի «Միակնութիւն և բազմակնութիւն»:

Այդ գրքերից ես միայն վնասուեցի նիւթապէս, անցան շատ տարիներ, ես շատ գրքեր թարգմանեցի, ազատ ժամերս նուիրելով, բայց այլեւ չվստահացայ հրատարակել խուսափելով նիւթական վնասից: Տպագրելով սոյն գրքոյկը, ես կանխօրէն գիտեմ, որ դարձեալ նիւթապէս պիտի տուժեմ, բայց գտնում եմ, որ այդ գրքոյկը գեղեցիկ ժամանց կարող է լինել գրա-

կանութեան և ընթերցանութեան սիրողների, համար, իհարկէ, ոչ այն սիրողների, որոնց ճաշակը փչացած է «գուլումի» գրքերով. սիրտը և ուղեղը թունաւորուած: 19-րդ դարի վերջին 2 տասնամեակի և 20-րդ դարի սկզբի, մեր գրականութիւնը գրեթէ բացառապէս գուլումի գրականութիւն կարելի է անուանել, իսկ գրողներին «գուլումիստ», ինչպէս կան սիմվոլիստ, մօդերնիստ գրողներ, իսկ ժողովրդի լեզուով ասած «գուլումի»։ Ձուլում ստեղծելը ժողովրդի գլխին, գուլում երգելը մօղա, գրեթէ պարիզեան մօղա, դարձաւ: Մասամբ ինձ վարձատրուած կղզամ, եթէ այդ «Ընտիր մտքերը» գէթ մի քանի հայ երիտասարդների կսովորեցնեն, կընտելացնեն առողջ գործել և ետ կպահեն «գուլումի»-«սերի» մտածելակերպից և գործելակերպից: Ա. Ե.

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԷ:

1797 թ.

Հայնրիխ Հայնէն ծնունդ է 13 դեկտեմբերի Դիւսսելդորֆ քաղաքում հրէայ ծնողներից, հօր անունն էր Սամսօն, իսկ մօր անունը Բեսաի: Հայնրիխ Հայնէն իր հոգեկան և մտաւոր ոյժերի ամբողջ զարգացումը պարտական էր իւր մօրը, որ անսահման կերպով սիրում էր նրան և Հայնրիխը իր ամբողջ կեանքի ընթացքում սրբազան սէր էր տածում դէպի մայրը: Դիւսսելդորֆում նա ստացաւ իր առաջին ուսումը Փրանցիսկեանների նախկին վանքի շինութեան մէջ գեղեղուն զարգացում: Այդտեղ և Փրանցիսկեանում Մայնի վրայ, ուր նա ապրեց մի ժամանակ, Հայնէի պատանեկական հոգին առաջին անգամ համակուեց սիրոյ այն երանութեամբ և տանջանքներով, որոնք ծառայեցին իբրեւ հիմք ամբողջ նրա քնարերգական բանաստեղծութեան՝ լիրիկայի: 1819 թականին Հայնէն մտաւ Բօննի համալսարանը. 1820 թին նա փոխադրուեց Գեօտտինգենի համալսարանը, որտեղից մենամարտի համար նա հեռացրուեց և տեղափոխուեց Բերլին, ուր նա սկսեց յաճախել գրական շրջանները: Այստեղ 1822 թին նա հրատարակեց իր բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն, որ զբաւիչ աւելնով և օրիգինալ ձևով մեծ աջողութիւն

գտաւ: «Նրա երգերը, գրում էին արդէն այն ժամանակ նրա առաջին կրթականները, — հիերօզլիֆներ են, որ մի քանի նշաններով արտայայտում են զգացմունքների և մտքերի մի ամբողջ աշխարհ: Երբէք ոչ մի բանաստեղծ իր երգերի մէջ չի մարմնացրել իր անձնականութիւնը, ամբողջ ներքին կեանքը այսպիսի համարձակութեամբ և անպայմանութեամբ, որպէս Հայնէն»: Այս հատորին յաջորդեցին Հայնէի ուրիշ երկերը, որոնցից իւրաքանչիւրը Գերմանիայի հասարակական կեանքում աչքի ընկնող մի անցք էր: 1825 թականի 28 յունիսի Հայնէն հայլիգենշտադ գիւղում քաղաքում ընդունեց քրիստոնէութիւն: Նա քրիստոնէութիւնն ընդունեց ընտանեկան հանգամանքներից և նիւթական անհրաժեշտութիւնից ստիպուած: Հետեւալ տարիներում մենք հանգիպում ենք բանաստեղծին մէկ համբուրգում, մէկ ծնողների մօտ Լիւնսբուրգում կամ Նորդէրնէյում կամ Անգլիայում, կամ Միւնխենում կամ Իտալիայում: Նա իր բանաստեղծական անհարթ բնաւորութեան շնորհիւ էր կարողանում մի տեղ բուն գնել, հիմնաւոր, հաստատ ընտելութիւն հաստատել: Հէնց այդ աստանդական կեանքի շրջանում նա ստեղծեց և հրատարակեց իր ամենանշանաւոր երկերը: 1830 թականի Պարիզի յուլիսեան յեղափոխութեան օրերին նա Համբուրգումն էր: Պարզ է, որ Հայնէն իր ամբողջ հոգով ու գոր-

ծունէութեամբ ձուլուեց այդ փոթորկալից օրերի անցքերի հետ: Նրա մասնակցութիւնը այդ անցքերին, անհնարին դարձրեց այլ ևս նրա անվտանգ, ապահով կեանքը Գերմանիայում:

Պարիզի յուլիսեան յեղափոխութեան աղղեցութեան տակ և անմիջապէս նրանից յետոյ Գերմանիայում առաջ եկաւ, ստեղծուեց մինոր գրական շարժում, նոր գրական կուսակցութիւն՝ «Ներիտասարգ Գերմանիա» անունով, որի գլխավոր սիւներ և ղեկավարներ յայտարարուեցին Հայնէն և Բեօրնէն, իբրեւ քաղաքական գրողներ: «Ներիտասարգ Գերմաններին» և նրանց հետեւողներին բոլոր գերման տէրութիւնները հալածում էին հաւասարապէս, նրանց մասին առանձին դատան օրէնքներ հրատարակուեցին, նրանց ոչ միայն ժամանակակից գրութեաները արգելուեցին, այլ և ապագայում լոյս տեսնելիք երկերը:

1831 թուականի մայիսին Հայնէն գնաց Պարիզ, որ վաղուց դէպի ինքն էր գրաւում ներան: Աշխարհի այդ մայրաքաղաքի բուլվարները կենդանի, լի ցնցումներով ջղային կեանքը շուտով ամբողջապէս տիրեցին նրան: Պարիզի կեանքը համապատասխանում էր նրա վառվռուն բնավորութեան՝ տեմպերամենտին, սիրոյ և ազատութեան ասպետին վայել: Պարիզում նա մասնակցում էր Ֆրանսիական թերթերին, ծանօթացնելով Ֆրանսիացիներին գերմանական ժամա-

նակակից մտաւոր շարժման հետ: Պարիզում Հայնէն ամուսնացաւ Մադիլտա Միրատ աղջկայ հետ, որ ջերմ սիրում էր նրան, բայց հեռու էր նրա մտաւոր և հոգեւոր աշխարհը հասկանալուց: Մատիլդային նա անմահացրել է իր շատ երգերի մէջ: 1843 թ. ապրիլին, 13 տարուայ նոթենիութիւնից, վտարանդու կեանք անցկացնելուց յետոյ, Հայնէն կարճ ժամանակով կրկին այցելեց Գերմանիան, ուր նոր հովերը կերպարանափոխել էին քաղաքական մթնոլորտը, բայց Պարիզը դարձեալ մնաց որպէս նրա մշտական բնակութեան տեղ: Պարիզ վերադառնալուց յետոյ, նա անկողին մտաւ: Հիւանդութիւնը, որ փոթորկալից կեանքի հետեանք էր, տանջում էր նրան անխնայ կերպով: Եօթ տարի նա, կենդանի, սարսափելի տանջանքների մէջ պառկած էր այդ բաց գերեզմանի մէջ: 1855 թականի փետրւարի 16 լոյս 17-ի գիշերը մահը վերջապէս ազատեց Հայնէին անտանելի տանջանքներից: Իր կամքի համաձայն նա թաղուած է Պարիզի Մոնմաբտը հանգստադրանում: Նրա գերեզմանի վրա մի անշուք տապանաքար է քաջած, որի վրա երկու բառ են քանդակուած Հանրի Հայնէ (Henri Heine): Փոքրիկ երկաթէ ցանկապատը շրջապատում է տապանաքարը: Հայնէի երկրպագու ճանապարհորդները այցելելով Պարիզը, գալիս են ուխտէ՝ Մոնմաբտը նրա գերեզմանին և ծա-

ղիկներով զարգարում նրա գերեզմանը կամ այ-
ցետոմսեր թողնում մակագրուած զանազան գե-
ղեցիկ բանաստեղծական կտորներով իբրև յիշա-
տակ:

Հայնէն իր զրիչը փորձեց զրահանութեան
բոլոր տեսակներում, բանաստեղծական, արձակ,
հրապարակախօսական, քննադատական և այլն,
բայց նրա գլխաւոր արժանիքն է և կմայ միշտ,
որպէս մեծ երգիծաւորն. նա իր երգիծանքի մէջ
մինչև անգամ ինքն իրան չէր խնայում: Հիւանդ
դարի հիւանդ դաւակ նա չստեղծեց Գեօթէի
«Պոուստի» նման մի երկ, կամ Շէկսպիրի»
Համլէտի պէս մի գործ, սակայն ինչ որ նա ստեղ-
ծեց անհունօրէն մեծ և նշանաւոր էր: Նրա մի
միտքը, մի պատկերը ամբողջ աշխարհ են պա-
լունակում երբեք իրանց մէջ, այնպէս հանճա-
րեղ են նրանք: Հայնէի երկերը գրեթէ հայերէն
չեն թարգմանուած, բացի «Պօրենցիայի գիշեր-
ներից», որ լոյս տեսաւ պատկերազարդ «Ար-
ձագանք»-ի, կարծեմ, 1890 թւի համարներում և
չհաշւած մի քանի մանր բանաստեղծութիւնները:
Գերմանիան, նոյն իսկ Հայնէի հայրենի քաղաք
Դիւսսելդօրֆը մինչև այժմ ոչ մի արձան չեն
կանգնեցրել մեծ բանաստեղծին, չնայած նա
Գերմանիայի առաջնակարգ բանաստեղծներից է
և նրա փառքը ու պարծանքը: Շատ խոր է գեր-
մանական թթու շովինիզմը տակաւին և գեր-

մանացիք մինչև այժմ չեն կարողանում ներել
Հայնէի հրէական ծագումը և երգիծական, թու-
նաւոր գրիչը: Միայն աւստրիական Ֆրանց-Յով-
սէփ կայսրի կին, չարագործի ձեռքով սպանուած
կայսրուհի Ելիզաւետան, որ Հայնէի սիրահար
էր, Կօրֆու կղզու վրա կանգնեցրել է փառա-
հեղ մի արձան:

Մի հանգամանք էլ կայ, որ գերմանացիք
երբէք չեն մոռանալ և Հայնէին երբէք չեն նե-
րիւ: Հայնէն Փրանսիական կառավարութիւնից
տարեկան ստանում էր 4,800 ֆրանկ 1838 թը-
ւականից մինչև 1848 թւականը այն ֆօնդից,
որ Փրանսիական կառավարութիւնը յատկացրել
էր յայտնի քաղաքական վտարանդիներին (էմիգ-
րանտներին): Հայնէի թշնամիները օգտուելով
այդ հանգամանքից Հայնէին գերմանական հայ-
րենիքի դաւաճան հրատարակեցին, մինչդեռ Հայ-
նէն պարծենում էր Փրանսիական կառավարու-
թեան տուած նպաստով, յայտարարելով, որ
Փրանսիան գիտէ գնահատել նոյն իսկ օտար
զրոյներին և ըստ արժանւոյն վարձատրել, մինչ-
դեռ գերման գրողները իրանց հայրենիքում
Գերմանիայում ոչ միայն չեն գնահատուած, այլ
հալածուած են և յաճախ քաղցից մեռնում:

Ներկայ շատ անգոյն կենսագրական տեղե-
կութիւնները և Հայնէի «ընտիր մտքերը» որոշ
գաղափար կտան Հայնէին անծանօթ ընթերցող-
ներին նրա մտաւոր և հոգեւոր աշխարհի մասին:

ՊԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

—Կարելի է ծերանալ և չիմանալ, որ սիրում ես հայրենիքդ. դրա համար պէտք է մնալ աշխատեղ, նորա մէջ: Գարնան էութիւնը մենք իմանում ենք ձմրանը. վառարանի մօտ են երգւում լաւագոյն, մայիսեան երգերը:

—Իւրաքանչիւր մի բայլ, որ մարդկութիւնը գնում է առաջ, արեան հեղեղներ արժէ: Արդեօք այդ խիստ թանգ չէ: Միթէ անհատի կեանքը նոյնքան թանգ չէ, որքան և ամբողջ սերնդի: Ամեն մարդ—այդ մի աշխարհ է, որ նրա հետ ծնւում է և նորա հետ մեռնում. իւրաքանչիւր գերեզմանաքարի տակ ումվ:ովուած է համաշխարհային պատմութիւնը:

Ով ժողովուրդ, ցնցոտիներով ծածկուած խեղճ թագաւոր, գտնում է իրան համար շողորթներ, որոնք աւելի անխիղճ են Բիւզանդիոնի և Վերսալի շողորթներից: Ժողովրդի այդ պալատական ծառաները, լակէյները գոչում են բոլոր փողոցների անկիւններում. «Ո՛հ որպէս գեղեցիկ է ժողովուրդը». —Ո՛հ որքան բարի է ժողովուրդը, ո՛հ որքան խելացի է ժողովուրդը.

Դուք սուտ էք ասում, ժողովուրդը գեղեցիկ չէ. նա այլանդակ է: Շինեցէք լողարաններ, ուր նորին մեծութիւն ժողովուրդը կարողանար ձրի լողանալ: Ժողովուրդը բարի չէ. նա երբեմն բարկացկոտ է ինչպէս բոլոր իշխանները. Կերակրեցէք նորան, և նա բարի կլինի: Նա խելացի չէ: Նա սիրում է միայն նորան, ով խօսում է կամ մոնչում է նորա հետ նրա կրքերի ժարգօնով (լեզուով), բայց ասում է նորան, ով նրան բանականութեան՝ խելացի խօսքեր է ասում: Այսպէս է նա ամեն տեղ, և՛ Պարիզում, և՛ Երուսաղէմում:

✓ —Հայրենիքը ստրկուհի է աշխատեղ, որտեղ փայտն է իշխում:

—Պարլամենտական երկիրներում ընտրական պայքարը-այդ ձիարշաւներ են, որտեղ ոչ թէ ոյժի, ցեղի, տոկոնութեան ներքին առաքինութիւններն են յաղթանակը որոշում, այլ արագատա շարժունութիւնը:

Մարդկային կեանքը քիչ է մի մարդու բնաւորութիւնը ճանաչելու և հասկանալու համար: Իսկ ժողովուրդը բաղկացած է առանձին անհատների, մարդկանց միլիոններից:

Ամբոխը, ժողովուրդը ծաղր, հեգնանք չէ:

լ սիրում: Ժողովուրդը, որպէս հանճար, որպէս սեր,
որպէս անտառ, որպէս ծով, լուրջ է:

Իսկապէս ոչ մի մարդ կատարելապէս ազա-
տամիտ չէ: Կատարելապէս ազատամիտ է միայն
ամբողջ մարդկութիւնը: Մի մարդ ունի ազա-
տամտութեան մի մասը, որ ուրիշը չունի և
այլն:

Ամբողջ աշխարհի վաճառականները մի կրօն
ունեն: Գրասենեակը նրանց եկեղեցին է, գր-
քակալը նրա բեմը—, կասսայի գիրքը նրա սուրբ
գիրքը (աստուածաշունչը), պահեստի տեղը, ամ-
բարը—սրբութիւն սրբոցը. բորսային զանգակը
նրա եկեղեցու զանգը, ոսկին—նրա Աստուածը և
վարկը—նորա հաւատը:

Աշխարհի հիմնական չարիքը այն է, որ
Աստուած շատ քիչ փող է ստեղծել:

Հրէայ Փուլղը ընտրուած է պարլամենտի
անդամ: Եւ շատ ուրախ եմ այդ բանի համար,
ուրեմն հրէաների իրաւահաւասարութիւնը իրա-
գործուել է լիովին: Առաջ միայն շատ հանճա-
րեղ հրէան կարող էր պարլամենտ մտնել սպր-
դել. բայց եթէ այդպիսի միջակութիւնը արդէն,
որպիսին Փուլղն է, անցնում է—այլևս տարբե-

լութիւն, խտրութիւն չկայ հրէաների և ոչ հրէ-
աների միջև:

Բանաստեղծը—ասել է. «առաջին թագա-
ւորը—բաղդաւոր զինուոր է եղել»: Աւելաց-
նենք—«առաջին սեղանաւորը՝ բանկիր բաղդա-
ւոր խաբեբայ է եղել»:

Հասարակութիւնը միշտ հանրապետութիւն
է. առանձին անհատները միշտ ձգտում են առաջ
գնալ, իսկ ամբոխը, մասսան նրանց ետ է մը-
ղում:

Պէտք է ճանաչել ամբողջ Գերմանիան,
միայն մի մասի ճանաչելը վտանգաւոր է: Այդ
այն ծառի պատմութիւնն է, որի տերեւները
և պտուղները փոխադարձ հակաթոյն են:

Լութերը շարժեց, ցնցեց Գերմանիան,
բայց Ֆրանց Դրակէն մեզ դարձեալ հանգստաց-
րեց. նա մեզ գետնախնձոր տուաւ:

Իւղը (մեռոնը), որ թագաւորների գլխի վե-
րայ է հեղվում, թափվում, արդեօք խաղաղեց-
նում է նրանց մտքերի փոթորիկները:

Գերմանական ազգ չկայ. ազնուականու-

Թիւնը, քաղաքացիների միջին դասակարգը, գիւղացիները Գերմանիայում աւելի բազմատեսակ՝ այլասեր են, քան Ֆրանսիացիների մօտ յեղափոխութիւնից առաջ:

Հաննովերի ազնուականները (Junker) էշեր են, որոնք միայն ձիերի մասին են խօսում:

Հների մօտ, հնում հայրենասէրները միշտ իրանց փառաբանում են, օրինակի համար, Կիկերոնը: Նորերն ևս նոյնպէս են անում այն ժամանակ, երբ բարձրագոյն ազատութիւնն է տիրապետում, օրինակ Րոբեսպիեր, Գամիլլ Դիւմուլէն և ուրիշները: Եթէ այսպիսի ժամանակ մեզ համար ևս կգայ, մենք էլ կփառաբանենք մեզ: Անփառունակ (փառք չվայելող) մարդիկ իհարկէ իրաւացի են, երբ նրանք համեստութիւն են քարոզում: Նրանց համար այնպէս դիւրին է այս առաքինութիւնը կիրարկել, գործադրել, նա նրանց անձի ոչ մի յաղթութիւն (ինքնայաղթութիւն) չարժէ և նրանք խիստ սովորական մարդիկ լինելու պատճառով, չեն նկատում իրանց մէջ բացակայող հերոսութեան գործերը (նրանք անգործունեայ են և հերոսութիւնից զուրկ):

Պրուսական ազնուականութիւնը ինչ որ

վերացական բան է, նա բացառապէս յենվում է իւր ծննդեան, ծագման վրա և ոչ սեպհականութեան: Պրուսական ազնուականները (իւնկեր) բնաւ դրամ չունեն:

Ծառաները, որոնք տէր չունեն, ժամանակաւորապէս տեղ, պաշտօն չունեն. դորանով նրանք ազատ մարդիկ չեն դառնում. ծառայական զգացմունքը նորանց հոգու մէջ է:

Գերմանացին նման է այն ստրկին, որ հրնազանդում է իւր տիրոջ առանց շղթայի, առանց մտրակի, միայն նրա խօսքով, անգամ հայեացքով: Ստրկութիւնը նրա մէջ է, նրա հոգու մէջ նիւթական ստրկութիւնից աւելի վատ է հոգեւոր ստրկութիւնը:

Գերմանացիները ներկայումս աշխատում են իրանց ազգութեան կազմակերպութեան բարգաւաճման համար, սակայն նրանք խիստ ուշ սկսեցին գործը: Երբ նրանք կաւարտեն այս աշխատանքը, ազգայնական սկզբունքը այլ ևս գոյութիւն չի ունենալ աշխարհում, ուստի նրանք ստիպուած կլինեն դարձեալ ձգելու, թօթափելու իրենց ազգայնութիւնը, առանց որ և է օգուտ քաղած լինելու նրանից, որպէս այդ ալին Ֆրանսիացիները կամ անգլիացիները:



Շունը, որին բերանկապ են հագցնում, հաշում է իւր յետոյքով: Ծուռ, ոլոր մոլոր մտածողութիւնը աւելի գէշ հոտով է արտայայտուում— արտայայտութեան կեղծութեան միջոցով:

Ես միշտ Կեօնի տաճարի վրա նայել եմ, որպէս խաղալիքի վրա. ես մտածում էի. այնպիսի հսկայ—երեխային, որպիսին գերմանական ազգն է, պէտք է և այնպիսի հսկայական խաղալիք, որպէս Կեօնի տաճարն է: Բայց այժմ ես ուրիշ կերպ եմ մտածում: Այժմ ես այլևս չեմ կարծում, որ գերմանական ազգը հսկայ-երեխայ է. յամենայն դէպս նա արդէն մանուկ չէ, այլ հասակն առած երիտասարդ, որ շատ բնական ունակութիւններ, ձիրքեր ունի, բայց որից ոչ մի կանոնաւոր, կարգին բան դուրս չի գալ, եթէ նա լրջօրէն չօգտուի ներկայից և ապագան աչքի առաջ չունենայ: Մենք այլ ևս ժամանակ չունենք խաղալու կամ անցեալի երազները իրագործելու:

Քաղաքական հողմացոյցեր: Նրանք երդւեցնում են փոթորիկները և վստահ են իրանց շարժունութեան կենդանութեան վրա—նրանք մոռանում են, որ այդ իրանց շարժունութիւնը բնաւ չի օգնիլ նրանց, երբ խիստ փոթորիկը կը-

կործանի աշտարակը, որի վրա նրանք կանգնած են:

Երբ ես խօսում եմ ամբոխի մասին, ես նրանից դուրս եմ համարում առաջինը նրանց, որոնց անունները նշանակուած են հասցէների գրքում, երկրորդ՝ նրանց, որոնք այնտեղ չեն յիշուած:

Երիտասարդ խոգերի հովիւը ցանկանում է, որպէս հարուստ մարդ, իւր հօտը պահպանել ձիան վրանստած... Մեր բանկիրները (սեղանաւորները) նստած են բարձր ձիերի վրայ և տակաւին շարունակում են իրանց հին կեղտոտ արհեստով զբաղուել:

Նոր քաղաքացիական հասարակութիւնը երկրաւոր վայելքների և զուարճութիւնների արբեցութեան մէջ, ցանկանում է, որքան կարելի է շուտով, դատարկել վերջին դաւաթը, որպէս հին ազնուական հասարակութիւնը 1789 թուականից առաջ... Եւ նա արդէն լսում է միջանցքում նոր աստուածների մարմարեայ քայլերը, որոնք առանց դուռը բաղխելու տօների, խրախճանների դահլիճը կմտնեն և բոլոր սեղանները վայր կձգեն, կջարդեն:

*** Հէ սիրում հրէաներին: Իմ հարցին այդ բանի պատճառի մասին՝ նա պատասխանեց. «Նը-
րանք վատ են առանց շնորհալիութեան, զըզ-
ւանք են ներշնչում դէպի վատութիւնը և ինձ
են աւելի շատ փնասում քան օգուտ բերում»:

Րոտշիլդը նոյնպէս կարող կլինէր մի Վալ-
հալլա շինել—Պանթէօն բոլոր թագաւորների
համար, որոնք նրանից դրամ են փոխ վերցրել:

Րոտշիլդի թշնամիների գլխաւոր բանակը
կազմում են նրանք, որոնք ոչինչ չունին. նո-
րանք ամենքը մտածում են. ինչ որ չունենք մենք,
ունի Րոտշիլդը: Դրանց միանում են գլխաւորա-
պէս և այնպիսի մարդիկ, որոնք կորցնում են
իւրեանց կայքը, կարողութիւնը. փոխանակ այդ
կորուստը իւրեանց յիմարութեան վերագրելու,
նրանք մեղքը բարդում են նրանց նենգամտութեան
վերայ, որոնք գիտեն իրանց կայքը, կարողու-
թիւնը պահպանել: Այնպէս որ իւրաքանչիւր ոք,
ով դրամ չունի այլ ևս, Րոտշիլդի թշնամին կը-
դառնայ անպատճառ:

Համայնավարականը, Կոմունիստը, որ ցան-
կանում է Րոտշիլդի հետ բաժանել նորա երեք
հարիւր միլիոնները, Րոտշիլդը զրկում է նրան

իւր մասը, 9 սու (մօտ 20 կոպ.): «Դեհ, այժմ
ինձ հանգիստ թո՛ղ»:

Կոմունիստները (համայնավարականները)
զարմանալի արհամարհանքով են վերաբերում դէ-
պի հայրենասիրութիւնը, փառքը և պատերազմը:

Գէր կովերին հետևում են նիհարները, նի-
հարներից յետոյ գալիս է մսի բացակայութիւն:

✓ Ես ցանկանում եմ մարգարէանալ. մի օր
ձմեռը դուք կտեսնէք յեղափոխութիւն, որ ա-
ւելի սարսափելի կլինի, քան մինչև այժմ եղած-
ները: Երբ արիւնը կհոսի ձիւնի մէջ...:

Ժողովրդի յորձանքը ալեկոծ ծովի է նման.
Նրա վերայ անցնող ամպերը, նրան միայն գոյն
են տալիս և ձերմակ ալիքներ (Միւլլեր և Բրա-
ուէր) նրանց մէջ են լողում—գրողները իրանց
խօսքով ներկում, գոյն են տալիս ղոյութիւն
ունեցող խռովեալ, ապստամբ տարրերին:

Մտքերի ասսօցիացիան (ընկերակցութիւնը)
այն մտքով, որպէս ընկերակցութիւն արդիւնա-
գործութեան մէջ, օրինակ, փիլիսոփայական դա-
դափարների կապակցութիւնը, միութիւնը քաղա-

քական-տնտեսական գաղափարների հետ, հրաշալի նոր արդիւնքներ կտար:

Հին առակը երեք եղբայրների մասին իրականանում է: Մէկը հարիւր մղոն է վազում մի քանի ժամերի ընթացքում, միւսը հարիւր մղոն առաջ, հեռու է տեսնում, երրորդը նոյնպէս հեռու արձակում է (Թնդանօթ), չորրորդը փչելով զօրքեր է ջնջում—երկաթուղի, հեռագրատակ, Թնդանօթներ, վառօդ կամ մամուլ:

Համաձայնութեան հրապարակը (Պարիզում): Ես կցանկայի իմանալ, եթէ նոյն այդ տեղում ցանէին, արդեօք ցորեն կբուսնէր:

Գրեվի և Լուդովիկոս XV-ի հրապարակների վերայ կատարուած բազմաթիւ գլխատումները argumentum ad hominem (ապացոյց մարդկանց համար) էին. իւրաքանչիւր ոք այստեղ կարող էր տեսնել, որ ազնուականի արիւնը աւելի գեղեցիկ չէր քան ամեն մի քաղաքացու արիւն: Խելքը կորցրած քաղաքացին՝ բուրժուան իւրաքանչիւր գլխատման ներկայ է լինում, որպէս մի գործնական փորձի իրէպակաս թէօրիան ապացուցանելու համար:

Տեսիլք: Լուդովիկոս XVI (ԺԶ)-ի հրապարակը: Մի դիակ, նորա մօտ է գլուխը: Բժիշկը փորձեր է անում, արդեօք չի կարելի դարձեալ

նրանց կպցնել, միացնել. գլուխը շարժելով, առում է. «Անհնարին է» և հառաչելով հեռանում է... Պալատականները փորձում, աշխատում են խելագար գլուխը ամուր կապել, բայց նա միշտ ընկնում է...

(Երբ մի թագաւոր կորցրել է իւր գլուխը, այլ ևս ոչինչ բանով չի կարելի նրան օգնել:

Խելագարը չի ցանկանում Տիւլերի զբօսնելու գնալ. թէև նա ծառերը տեսնում է գեղեցիկօրէն կանաչ, բայց նրա արմատները գետնի մէջ արեան պէս կարմիր:

Որքան մարդիկ աւելի մօտ էին Նապոլէօնին, նոյնքան աւելի նրանք սքանչանում էին նորա վերայ: Ուրիշ հերոսների հետ հակառակն է պատահում:

Նապոլէօնը ատում է մանր խանութպաններին և փաստաբաններին, նա սիրանց գնդակահար է անում և նորանց փաստաբաններին տաճարից վռնդում է: Նորանք հնազանդւում են, բայց ատում են նորան (նորանք կարծում են, որ յեղափոխութիւն կատարեցին իւրեանց համար, իսկ Նապոլէօնը նրանից օգտուում է իւր և ժողովրդի համար): Հին բեժիմի վերահաստատութիւնը նորանց սրտին խիստ մօտ է:

Կայսրը երկաթի նման ողջախոհ էր: Նորա թշնամիները—ամպամած ուրուականներ են, որոնք զիշերները պարում են Վանդոմի սիւնի շուրջը և կծում այն:

—

Նորանք հայհոյում են նորան, սակայն այնուամենայնիւ, միշտ որոշ յարգանքով—մինչդեռ նրանք աջ ձեռքով նորա վերայ ցեխ են շալտում, ձախ ձեռքում բռնած են գլխարկը:

—

Code Napoléon ի (Նապոլեոնի օրինադրքեր) կազմողները, բարեբաղդաբար, յեղափոխութեան ժամանակ են ապրել, երբ նրանք կարող էին զգալ բոլոր կրքերը և կեանքի բարձրագոյն խնդիրները:

—

Մի ազգ չի կարող վերածնուել, երբ նորա կառավարութիւնը բարձր, բարոյական ոյժ ցոյց չէ տալիս: Այդ ոյժն է վերածնում: Ահա ինչու Նապոլեոնի տասնևհինգամեայ կառավարութիւնը անհրաժեշտ էր. նա բուժում էր հիւանդ ազգը հրով և երկաթով, նորա թագաւորութեան ժամանակը բժշկութեան շրջան էր: Նա ֆրանսիացիների Մովսէսն էր: Ինչպէս նա՝ Մովսէսը իւր ժողովուրդը անապատի միջով էր տանում նորան այս կերպով բժշկելու համար, նոյնպէս և Նապոլեոնը ֆրանսիացիներին

առաջնորդում էր ամբողջ Եւրոպան անցնելիս: Այդ կառավարութեան որպէս ընդդիմադիր կանգնած էր փտածների կուսակցութիւնը, և նրան պատկանում էր տիկին Ստալ: Նորա շրջանը (ընկերութիւնը) խելացի սրամիտ, սիրալիր է—բայց փտած. Տալէյրան, փտութեան աւագը, ստի Նեստորը, երկու դարերի ուխտադրուժը: Ապա Շատոբրիանը—մենք յարգում, մենք սիրում ենք նորան, բայց նա, մեծ անհետեղականը անմահ դիւրախար մարդը բանաստեղծ, ուխտաւոր Յորդանանի ջրի մի շիշով, թափառող էլէգիա (եղերգ), անդրգերեզմանական միտք բայց ոչ մարդ: Նորա միւս բարեկամները արիստոկրատական արուարձանի մի քանի ազնուականներ, ասպետական ստուերներ, սիրալիր մարդիկ, բայց հիւանդ, տառապողներ, անգօրներ: Բենժամէն Կոնստան լաւագոյնն էր նոցա մէջ, բայց նա ևս մահուան մահճի մէջ տակաւին դրամ էր առնում Լուգովիկոս Փիլիպպոսից:

Պօցցօ դի Բօրգօն և Շտայն մաքուր հերոսներ են, մէկը ուրացող, որ երկու բուբուկ համար վաճառեց իւր հայրենիքը, իւր ընկերներին և իւր սեպհական սիրտը, միւսը բարձրաքիթ (քիթը վեր քաշող, հպարտ) ազնուական է, որ հայրենասիրութեան թիկնոցի տակ ծածկում էր անցեալի զինանշան կրող հագուստը՝ դաւաճանութիւն և առելութիւն:

Յայտնի չէ ինչու մեր գերմանական թագաւորները այդքան երկար են ապրում. նրանք վախենում են մեռնել, նրանք վախենում են դարձեալ միւս աշխարհում Նապոլէօնին հանդիպել:

+ Ինչէր չենք տեսնում մեր՝ ամեն տեսակ հրաշքներով լի ժամանակում: Բուրբոնները անգամ նուաճողներ, տիրողներ են դառնում:

Պարիզի ժողովուրդը աշխարհը փրկեց և դորա համար մի գրոշ անգամ թէյի փող (На чай, Trinkgeld) չառաւ:

Այո, Պարիզը նորէն ձեռք բերեց մեծագոյն փառքը: Բայց աստուածները մարդկանց մեծութեան նախանձելով, աշխատում են նորանց ճնշել, ստորացնում են, օրինակի համար, ողորմելի անցքերով:

Մամուլը նման է յայտնի առասպելական ծառին. եթէ դուք կուտէք նորա պտուղները, կհիւանդանաք, իսկ եթէ տերեւները կուտէք, կառողջանաք, այդ հիւանդութիւնից կբուժուիք, և ընդհակառակն: Միևնոյն բանը կարելի է ասել օրինաւորական (թագաւորական) և հանրապե-

տական թերթերի ընթերցանութեան մասին Ֆրանսիայում:

Որպէս Հոմերոսի հերոսները ճակատամարտի դաշտի վերայ փոխանակում էին իրենց զէնքերը, նոյնպէս ժամանակակից ազգերը փոխանակեցին այնտեղ իրենց կաշին. Ֆրանսիացիները հագան մեր՝ արջինը, մենք նորանց՝ կապկի կաշին: Եւ ահա նորանք (Ֆրանսիացիները) դանդաղօրէն և ծանր կերպով են շարժւում, իսկ մենք արագ մագլցում ենք ծառերի վերայ: Նրանք մեզ յանդիմանում են որպէս վօլտերեանների. — հանգիստ եղէք, մենք միայն ձեր կաշուի մէջ ենք, իսկ մեր սրտերով նոյն արջերն ենք:

Հաճախեալ, Աշխարհը դարմանում է, որ մի անգամ նորա մէջ ազնիւ մարդ հանդէս եկաւ, ապրեց — և նորա տեղը պարապ (ազատ) է:

Անգղիացին, որ ամենուրեք վան — Ամբուրգին հետևում է, նորա ետևից ամբողջ աշխարհում թափառում է, նրա բոլոր ներկայացուցներին ներկայ է լինում, համոզուած, որ առիւծը վերջի վերջոյ պիտի նորան պատառէ, և անպատճառ ցանկանում է տեսնել այդ տեսարանը, նման է այն պատմաբանին, որ Պարիզում ապրելով սպասում է, երբ Ֆրանսիական ժողովուրդը վերջապէս պիտի պատառէ Լուդովիկոս Փի-

լիպպոսին, իսկ առ այժմ ամենայն օր դիտում է այդ առիւծին:

Եթէ թագաւորները համար Մոնթիօնի պրէմիան (մրցանակ, Prix Monthyon) հաստատւէր, Լուդովիկոս Փիլիպպոսը լաւագոյն թեկնածուն կլինէր այդ բանի համար: Նորա օրով, թագաւորութեան ժամանակ երջանկութիւն և ազատութիւն էին թագաւորում. նա ազատութեան իվետոյի թագաւորն *) էր:

Երկաթուղիները յանկարծական փոփոխութիւններ են առաջ բերում երկրի և մարդկանց նիւթական և տնտեսական վիճակի մէջ: Այդ բանը Ֆրանսիայում աւելի վտանգաւոր է քան Գերմանիայում: Ահա ինչու Ֆրանսիական կառավարութիւնը, երկչոտ կերպով է երկաթուղիների շինութեան ձեռնարկում:

Գիւղօն անգլիացի չէ, այլ շօտլանդացի. նա պարզակրօն է, բայց միայն իւր համար, որովհետև նորա բնութիւնը այսպէս է: Եւ որովհետև նա իւր բնութեան ամենից հակառակ բնութիւնները հասկանում է, նա համբերող է նոյն իսկ թեթևամտութեան դիմաց:

*) իվետօ թագաւորութիւնը ժողովրդական դարձաւ Բերանսէի «Le roi d'Yvetot» երգի շնորհիւ:

Նորա ամենից նշանաւոր յատկութիւնն է հպարտութիւնը: Երբ նա երկինք կգնայ սիրելի Աստուծոյ մօտ, Նրան՝ աստուծուն շնորհակալութիւն կմատուցանի այն մասին, որ նա նորան այդպէս լաւ է ստեղծել:

Ոճը մարդը ինքն է—նոյնպէս և կինը: Տիկին՝ Ստալի անճշտութիւնն է: Անճիշտ մտքերի և ճարտարախօսութեան ծաղիկների մի ամբողջ շարք, որոնք զարշահոտ գոլորշիների են նմանում: Նա փառաբանում է Վելլինգտօնին՝ այդ կաշեայ հերոսին փայտէ սրտով և թղթէ տկար ուղեղով:

Տիկին Ստալ շվէյցարացի էր: Շվէյցարացիք տոգորուած են իրանց լեռների պէս բարձր և վսեմ զգացմունքներով, սակայն նրանց հայեացքները հասարակութեան վերայ այնքան նեղ են, որքան և նորանց ձորերը:

Նորա վերաբերմունքը դէպի Նապոլէօնը. նա ցանկանում էր տալ կայսրին՝ կայսեր. բայց երբ Նապոլէօնը չցանկացաւ վերցնել նրանից այն, ինչ որ կայսրինն էր, նա սկսեց պարսաւել, խայտառակել նորան և Աստուծուն՝ կրկնակի բաժին տուաւ:

Տիկին Ստալը սրամտութիւնից զուրկ էր և յիմարութիւն ունեցաւ Նապոլէօնին ծիան վրայ նստած Րոբեսպիեր անուանելու: Րոբեսպիերը ներգործական Րուսսօն էր միայն, իսկ

տիկին Ստալ կրաւորական Ռուսսօն էր և աւելի շուտ նորան կարելի կլինէր կոչել Ռոբեսպիեր շրջագրեւորի մէջ:

Ամեն տեղ նա խօսում է կրօնի և բարոյականութեան մասին, սակայն ոչ մի տեղ չէ բացատրում ինչ է նա հասկանում դրանց տակ:

Նա պատմում է մեր ազնւութեան, մեր առաքինութեան և մեր մտաւոր զարգացման մասին. նա չէ տեսել մեր բանտերը, մեր հասարակաց տները, անառականոցները և մեր զօրանոցները. նա չէ տեսել մեր զրաւաճառներին, մեր կլաւրներին, մեր սպաններին, լէյտենանտներին:

Ֆրանսիական բոլոր լրագրները կուսակցութեան կատարելապէս յայտնի գոյն ունին. նրանք ոչ մի յօդուած չեն ընդունիլ, որ օրուայ խրնդիրներով և շահերով չէ զբաղում, այսպէս կոչուած, այժմէութիւններ:— Գերմանիայում դրա ճիշտ հակառակն է լինում, և եթէ ես երբեմն պէտք է ծիծաղեմ այն բանի վրայ, որ գերմանական թերթերը այնպէս հիմնաւոր կերպով են խօսում, դատում բաղմաթիւ առարկաների մասին, որոնք ոչ մի կապ և յարաբերութիւն չունին երկրի ժամանակակից շահերի և հարցերի հետ, օրինակ, չինական և հնդկական կուլտուրայի խնդիրներ, սակայն, այնուամեն-

նայնիւ, ես ուրախանում եմ գերմանական մամուլի այդ համաշխարհաքաղաքացիութեան վրայ, որ հետաքրքրւում է ամենից բազմազան կարիքներով և պահանջներով, որոնք գոյութիւն ունին այս աշխարհիս վերայ և այնպէս հիւրասիրաբար ընդունում է բոլոր հանրամարդկային դատողութիւնները, զրոյցները:

Հասարակապետութեան օգտին բարեաց համար կարելի կլինէր նոյն ապացոյցը առաջ բերել, ինչ որ Բոկկաչիօն կրօնի համար է մէջ բերում. նա գոյութիւն ունի, չնայած իւր պաշտօնեաների գոյութեան:

Հասարակապետութեան բարձրագոյն պաշտօնեաների գաղտնի ատելութիւնը գէպի հասարակապետութիւնը նմանում է ազնուատոհմիկ հռովմայեցիների գաղտնի ատելութեան, որոնք որպէս եպիսկոպոսներ և առաջնորդներ պէտք է շարունակէին իւրեանց նախկին իշխանութիւնը, պաշտօնները:

Ֆրանսիացիները հասարակական և մասնաւոր յարաբերութիւնների մէջ աւելի արժանի են վստահութեան քան գերմանացիները, որովհետեւ նրանք դրական մարդիկ են, և ցնորքներից զուրկ. միշտ երազող գերմանացին յանկարծ

մի գեղեցիկ առաւօտ մի այնպիսի բարկացած, խոժոռ դէմք ցոյց կտայ, որովհետեւ նա երագել է, որ դուք նորան վիրաւորել էք կամ թէ ձեր պապը նորա պապին մի ժամանակ աքացիով զարկել է:

Փրանսիացիները այնքան հակառակ են ամեն տեսակ երագներին և ցնորքներին, որ երբէք նրանց մարդ երագում չէ տեսնում, բայց միայն գերմանացիներին:

Գերմանացիները արտասահմանում՝ արտահանուած գարեջրից բնաւ լաւ չեն:

Այստեղ, Պարիզում ապրող փոքրիկ մարգարէների մէջ սակաւ են գերմանացիները—նրանց մեծ մասը Փրանսիա են գալիս ցոյց տալու համար, որ նրանք արտասահմանումն էլ մարգարէներ չեն:

Երիտասարդ օրիորդը ասաց. «Այդ պարոնը պէտք է որ շատ հարուստ լինի, որովհետեւ նա խիստ տգեղ է, հրէշային է»: Հասարակութիւնը ճիշտ այդպէս է դատում. «Այդ մարդը պէտք է որ խիստ ուսումնական լինի, որովհետեւ նա խիստ ձանձրացնող է, տխրութիւն պատճառող»: Դորա

մէջ է պարունակվում շատ գերմանացիների աջողութիւնը Պարիզում:

Ինձ թւում է, որ գերմանացիները միսսիան՝ առաքելութիւնը Պարիզում նորա մէջ է կայանում որ ինձ պահպանեն հայրենեաց կարօտից:

Որպէս չինական ստուերների խաղի մէջ Պարիզով գնացող գերմանացիները անցնում են մօտովս. ոչ մէկը որոշ կերպարանք չէ ընդունում:

Վտանգաւոր գերմանացիներ. յանկարծ նրանք հանում են զրպանից մի բանաստեղծութիւն կամ խօսակցութիւն են սկսում փրիստփայութեան մասին:

Գերմանական եւ Ֆրանսիական կանայք:

Գերմանական վառարանները աւելի լաւ են տաքացնում բան Ֆրանսիական վառարանները, բայց սրանք՝ Ֆրանսիական վառարանները աւելի հաճելի են, որովհետեւ նրանց մէջ դուք տեսնում էք փայլուն կերպով վառուող բոցը. ուրախ տեսարան է, բայց միևնոյն ժամանակ ձեր մէջքով ցուրտ սարսուռ է անցնում... Գերմանա-

կան վառարան, որպէս հաւատարմօրէն և առանց փայլելու տաքացնում ես դու:

Ֆրանսիայի և Ռուսաստանի մէջ դաշնակցութիւնը, երկու երկրների մերձաւոր նմանութեան շնորհիւ, բնաւ մի անբնական բան չէր լինի: Երկու երկրների մէջ ևս յեղափոխութեան ոգին է թագաւորում. այստեղ՝ Ֆրանսիայում ժողովրդի, մասսայի մէջ, այնտեղ՝ Ռուսաստանում մի անձնաւորութեան մէջ. այստեղ հանրապետական, այնտեղ բացարձակ միապետական ձևերի մէջ, այստեղ անսահման ազատութիւնը, այնտեղ քաղաքակրթութիւնը աչքի առաջ ունենալով. այստեղ գաղափարական սկզբունքներին, պրինցիպներին, այնտեղ՝ գործնական անհրաժեշտութեան ծառայելով. սակայն և՛ այստեղ և՛ այնտեղ յեղափոխականի պէս գործելով անցեալի դէմ, որ նրանք՝ և՛ ռուսները և՛ ֆրանսիացիները, արհամարհում, ատում են անգամ...

Մկրատը, որը կտրում, խուզում է հրէաների մօրուքը Լեհաստանում, նոյնն է, որով Պարիզի բանտում, Լուդովիկոս Կապետի մազերը խուզուեցան, այդ յեղափոխութեան մկրատն է, նորա գրաքննչի մկրատն է, որով նա ոչ միայն առանձին նախադասութիւններ կամ յօդաւորներ, այլ ամբողջ մարդուն, ամբողջ հաս-

րակութիւններ կամ յօդուածներ, այլ ամբողջ հասարակութիւններ, ամբողջ ազգեր անգամ կտրում է կեանքի գրքից:

Նիկողայոս ռուսաց կայսրը Ֆրանսիայի դէմ էր, որովհետեւ սա իւր պրօպագանդայով վտանգաւոր էր նորա կառավարութեան եղանակին, ձեռն՝ բացարձակ միապետութեան, բայց ոչ նորա կառավարչական սկզբունքներին. Լուդովիկոս Փիլիպպոսի մէջ նորան դուր չէր գալիս բուրժուազական սահմանափակ արքայական իշխանութիւնը, որ նորան ճշմարիտ բուն թագաւորական մեծութեան ծաղր, պարօգիւ էր թւում, բայց այդ անախորժութիւնը. դժկամակութիւնը պատերազմի դէպքերում տեղի են տալիս անհրաժեշտութեան առաջ, որ նորա համար բարձրագոյն օրէնք է— թագաւորները միշտ հնազանդվում են նորան և դրա հետ միասին յաճախ նրանք ստիպուած գոհում են իրանց անձնական համակրութիւնները: Դորա մէջ է նոցա զօրութիւնը, ուստի նոքա միշտ զօրեղ են և եթէ մէկը թոյլ է, շուտով նա մեռնում է ընտանիքի հիւանդութեամբ և տեղ է անում աւելի զօրեղին:

Իրաւացի է դիտել Կիւստինը նրանց անտարբերութիւնը դէպի անցեալը, դէպի հնութիւնը: Նոյնպէս ճիշտ կերպով է նա դիտել մարդկանց մէջ ծաղրաբանութեան, ծաղրելու

գիծը. այդ գոյութիւնն ունի և թագաւորի մէջ,
որ իւր բարձրութիւնից տեսնում է մանր գոր-
ծերի և մեծագոյն ֆրագնների միջև եղած հակա-
սութիւնը, և իւր վիթխարի զօրութեան գիտակ-
ցութեան մէջ նա մինչև հոգու խորքը ատում
էր ամեն տեսակ անիմաստ շատախօսութիւն:
Մարկիզը այդ բանը չհասկացաւ:

Որքան ողորմելի պէտք է երևան նորան
ասպետական լեհերը՝ այդ միջնադարեան դիակ-
ները ժամանակակից ֆրագները բերաններում,
որոնց նոքա չեն հասկանում:

Նա ցանկանում է նրանց ռուսներ դարձ-
նել, ինչ որ կենդանի բան. նմանապէս նա ցան-
կանում է կենդանացնել մումիաները՝ հրէանե-
րին. և ռուս հասարակ ժողովուրդը ի՞նչ է, եթէ
ոչ երկոտանի անասուններ, որոնցից նա ժողո-
վուրդ է պատրաստում մտրակի շնորհիւ: Նորա
ցանկութիւնները, նորա դիտաւորութիւնները
ազնիւ են, թէև գործ դրած միջոցները միշտ
սարսափելի են:

Ռուսաստանում ձգտում է երևում, հեղի-
նակութեան միութիւնը քաղաքական, ազգային
և մինչև անգամ կրօնական հաւասարութեան
միջոցով զօրեղացնելու: Հեղինակութիւնը բարձ-
րագոյն իմացականութեան հետ միասին գործում

է ինքն իւր դէմ սարսափելի կերպով. իւրա-
քանչիւր թուութիւն իրենից անջատելով, վանե-
լով. Պետրոս III մեռնում է, Պողոսը մեռնում է,
Կոնստանտինը հրաժարվում է և հռչակաւոր
թագաւորների մի կարգ հանդէս է գալիս Պետ-
րոս I-ից սկսած, օրինակի համար, Եկատերինէ
II Աղէքսանդր, Նիկողայոս: Յեղափոխութիւնը
այստեղ թագ է կրում և ինքն իւր դէմ այնքան
անողոք է, ինչպէս միայն մի ժամանակ հասարա-
կական փրկութեան կոմիտէն կարող էր լինել:

Նիկողայոս կայսրը, այսպէս ասած աշ-
խարհի բացարձակ իշխանն է: Նա կատարեալ
անտարբերութիւն է ցոյց տալիս, անցեալի, հնի,
պատմականի դիմաց:

Ռուսների կողմից խիստ դաժան բան էր
լեհական հրէաներից նրանց բաճկոնները խլե-
լը—նրանք պէտք չունէին այդ զգեստի տակ
շապիկ հագնելու, հենց այդպէս էլ խիստ յար-
մար էր նրանց համար իւրեանց մարմինները
քորելը... և նոյնպէս մօրուքները,— որ գլխաւոր
բանն էր. այդ մօրուքները նրանց ամբողջապէս
ծածկում էին: Եւ խոպոպիքները, նրանց համար
սրբազան խոպոպիքները, նրանց միակ պար-
ծանքը:

Մենք պէտք է ներկայումս յենուենք, վստահենք Ռուսաստանի վրայ, այն իսկ փայտի վերայ, որ երբեմն մեզ ծեծել է:

Գերմանական լեզուն—զուտ գրական լեզուն, գրողների արտադրութիւնն է, որ էժան գնով՝ վաճառվում է լայպցիգի տօնավաճառում:

Ոչ մի լեզուով բացի գերմանականից, բնութիւնը չէր կարող բանալ իւր գաղտնիքը:

Փառաբանենք Ֆրանսիացիներին, նրանք ստեղծեցին մարդկութեան երկու գլխաւոր պահանջների բւարարութիւնը—լաւ ուտելու և քաղաքացիական հաւասարութեան: Գաստրօնօմիայում և ազատութեան մէջ Ֆրանսիացիները ամենամեծ առաջադիմութիւնը արին:

Ֆրանսիական ազգը նման է կատուին, որ որտեղից էլ ընկնելու լինի, քնում է ողջ, և նորից ոտքի է կանգնում:

Ֆրանսիացիք կարող են հասկանալ արևը, բայց լուսինը հասկանալու անկարող են, ինչպէս և երանական հառաջանքները ու սոխակի ձայնի մեկամաղձիկ հիասքանչ ելեէջները:

Մեծ Ֆրանսիան, շատախօս ֆրանսիացիներին աղմկալից, եռուն ու շարժուն երկիրը, երբէք փիլիսոփայութեան համար նպաստաւոր հող չէ ներկայացրել:

Ֆրանսիական անմտութիւնը այնքան էլ խիստ անմիտ չէ, որպէս գերմանականը, որովհետև վերջինի մէջ, ինչպէս Պօլոնիոսն է ասում, մեթոդ կայ:

Սրամիտ ֆրանսիացին—այդ աւելաբանութիւն է:

Հանրապետութիւնը երկար ժամանակ չի կարող տևել Ֆրանսիայում պէրողութեան, հաճոյամոլութեան և ունայնասիրութեան հայրենիքում:

Ֆրանսիան—այդ Պարիզն է: Ի՛նչ է մտածում գաւառը-այնքան է կարևոր, որքան այն, ինչ են մտածում մեր ոտերը:

Երբ Աստուած երկնքում ձանձրոյթից տըխրում է, նա բաց է անում պատուհանը և նայում է Պարիզի զբօսավայրերի, բուլվարների վրա:

Փառքը Պարիզում ձեռք բերել կարելի է միայն կանանց միջոցով:

Պարիզը երիտասարդին հիանալի ժպտում է, տարիքոտ մարդուն զօրեղ կերպով ոգևորում է, իսկ ծերունուն սփոփում:

Գերմանացիների առաքելութիւնը Պարիզում—զգալ չտալ ինձ հայրենիքի անձուկը:

Պարիզում բնակող փոքրիկ մարգարէների մէջ քիչ են գերմանացիներ. շատերը, մեծ մասը սրանցից գալիս են Ֆրանսիա ապացուցանելու համար, որ նրանք օտար երկրում էլ մարգարէներ չեն:

Ամենայիմար անգլիացին քաղաքականութեան մասին ձեզ խելացի բան կասի. սակայն նրանցից ամենախելացին կրօնի մասին միայն յիմար բան կասի:

Անգլիացիները աւելի շատ կարծիքներ ունեն քան մտքեր: Մենք գերմանացիներս, ընդհակառակն, այնքան շատ մտքեր ունենք, որ չենք հասնում սեպհական կարծիք կազմելու:

Անգլիացիները արտահանում են, դուրս են շնչում իրենցից մի յայտնի գազ, ձանձրոյթի ածխածին:

Անգլիական լեզուն.—այդ եսասիրութեան շղացող հնչիւն է:

Անգլիացիները բերան են առնում մի զիւժին միավանկ բառեր. ծամում ծամծամում են նրանց, դուրս են թքում, և այդ կոչվում անգլիական լեզու:

—Անգլուհիք պարում են, կարծես էշերի վրա նստած լինին:

—Եթէ Եւրոպան աշխարհի գլուխն է, Իտալիան էլ նրա ելունդն է:

Զուիցարացիները զգացմունքները բարձր են, որպէս նրանց լեռները, բայց նրանց հայեացքները նեղ են, որպէս նրանց ձորերը:

Ամերիկան—այդ ազատութեան բանտն է, ուր ամենուրեք անտեսանելի շղթաներ են, ուր թաղաւորում է բռնակալներից ամենազգուելին—խուժանը: Ես սիրում էի Ամերիկան, երբ չէի ճանաչում նրան:

Արաբը սուր բառի գաղափարի համար հազար արտայայտութիւն ունի, ֆրանսիացին սիրոյ համար, անգլիացին կախաղանի համար, գերմանացին խմիչքի համար, իսկ միւնխէնցին նոյն իսկ այն տեղերի համար, որտեղ նա խմում է:

Ֆրանսիացին քաջ է, երբ ներկայ է որեւէ

հանդիսատես: Գերմանացին քաջ է առանց յետին մտքերի, նա կովում է կոռելու համար, ինչպէս խմում է խմելու համար:

— Եթէ այժմ գոյութիւն չունենային հրէաներ, և յանկարծ իմանային, որ մի ինչ որ տեղում գտնվում է մէկ օրինակ, մարդիկ կգնային հարիւրաւոր վերստ հեռու նրա ձեռքերը սեղմելու համար: Իսկ այժմ մեզնից խուսափում են: Նոր հրէաները վաւերում են հնրերին: Հնրերը բարձր են յոյներից և հռովմայեցիներից:

— Հրէաների ժամանակակից պատմութիւնը ողբերգական է: Իսկ եթէ այդ ողբերգականի մասին գրելու լինէք, ձեզ վրա կծիծաղեն. հէնց այդ էլ ամենից ողբերգական բանն է:

— Հրէաները շինուած են այն խմորից, որից շինում են աստուածներին:

— Հրէաները—արևելքի գերմանացիներն են. հրէաները և գերմանացիները մի ընդհանուր բարոյական սկզբունք ունին:

— Աստուածաշունչը—այդ հրէաների գլուխած հայրենիքն է:

† — Տարօրինակ բան. ամբողջ կեանքումս թափառելով փիլիսոփայութեան պարերի դահլիճներում, վերապրելով ոգու բոլոր օրգիաները, խրախճանքները, և ոչ մի տեղ բաւարարութիւն չգտնելով, ես յանկարծակի գտայ ինձ Աստուածաշնչի հողի վրա և նրա մէջ գտայ փրկութեան

աղբիւրը, ծունկ չոքելով, աչքերս երկինք յառած աղօթեցի:

— Յորի գիրքը—երկբայողութեան—սկեպտիցիզմի երգ երգոցն է:

ԿՐՕՆ եւ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻԻՆ

Գերմանացիք ընդունեցին քրիստոնէութիւնը հրէական բարոյականութեան սկզբունքի առհասարակ հրէութեան հետ հոգեւոր նմանութիւն ունենալու պատճառով: Հրէաները արեւելի գերմաններն էին և այժմ բողոքականները Ամերիկայում գերմանական երկրներում՝ Շոտլանդիայում, Գերմանիայում, Հոլլանդիայում, ոչ այլ ինչ են եթէ ոչ հին արեւելեան հրէաներ:

Ատեղութիւնը դէպի հրէաները ամենից առաջ սկսվում է ըմբռնողական դպրոցի ծագման հետ, դէպի միջին դարերը, կաթոլիկութիւնը, ազնուականութիւնը առաջ եկած սիրոյ և համակրութեան հետ, որ զօրացաւ գերմանամոլների շնորհիւ:

Եղէք կատարելապէս համբերող կամ բնաւ անհամբերող, գնացէք կամ բարի կամ չար ճանապարհով, իսկ անվճռական, երկշոտ կերպով մի քանի ճանապարհների վրա կանգնելու համար, դուք խիստ տկար էք: Ոչ մի հերկուլէս այդ չէր կարող անել և նա պէտք է իւր համար ընտրէր շուտով այս կամ այն ճանապարհը:

Մկրտութեան վկայականը ևրոպական կուլտուրայի համար մուտքի տոմսակ է:

Ես սիրում եմ նրանց՝ հրէաներին անձնապէս:

Երբ հրէաները լաւ մարդիկ են, նրանք քրիստոնեաներից լաւ են, իսկ եթէ վատ են՝ քրիստոնեաներից աւելի վատ են:

Հրէաները՝ այդ ուրուական-ազգը, որ առանց մի բայլ հեռանալու, հսկում, պահպանում էր իւր գանձը, Աստուածաշունչը: Զուր էր կախարդութիւնը—գերմանացիները ջնջեցին, ոչնչացրին այն:

Արդեօք վերջացած է հրէաների առաքելութիւնը: Ես կարծում եմ, նա կվերջանայ, երբ կգայ աշխարհական Մեսսիան—արդիւնաբերու-

թիւնը, աշխատանքը, ուրախութիւնը: Աշխարհական Մեսսիան կգայ երկաթուղով, Միքայէլը կբանայ նորա ճանապարհը, վարդեր կցանուեն նորա ուղու վրա:

Գերմանիայում կան աստուածաբաններ, որոնք ձգտում են վերջ տալ Աստուծուն հաւատին առ Աստուած: Ոչոքից մարդ չէ մատնւում, բայց միայն իւրայիններից:

Հեթանոսութիւնը վերջանում է, մեռնում, երբ փրկիսոփաները աստուածներին որպէս առասպելներ են ապացուցանում: Քրիստոնէութիւնը նոյն կէտին է հասել, Շտրաուսը մեր ժամանակի Պորփիրն է:

Նրանք, որոնք այս աշխարհում խմել են ուրախութեանց բաժակը, այնտեղ վերևում երկնքում նեղութիւն և վշտեր կունենան:

Մարդկութեան յուսահատութեամբ լի վիճակը հռովմէական կայսրների ժամանակ նպաստեց քրիստոնէութեան տարածման: Հպարտ հռովմայեցիների անձնասպանութիւնները, որոնք միանգամից հրաժարւում էին կեանքից, այն ժամանակ խիստ յաճախ էին լինում:

Ով քաջութիւն չունէր միանգամից վերջ

տալ իւր կեանքին, նա դիմում էր դանդաղ յամր անձնասպանութեան անձնուրացութեան կրօնի միջոցով: Քրիստոսի չարչարանքը նոյնպէս մի տեսակ անձնասպանութիւն էր:

Ստրուկները և դժբաղդ ժողովուրդը առաջին քրիստոնեաներն էին. իւրեանց քանակութեան և նոր կրօնական ոգևորութեան, ֆանատիկոսութեան շնորհիւ, նրանք ոյժ դարձան, որ Կոնստանդիանոսը հասկացաւ և համաշխարհային տիրապետութեան հռովմէական ոգին շուտով տիրեց նորան և վարդապետութեան ու պաշտամունքի միջոցով բարեկարգեց այն:

Քրիստոնէութեան ջատագովները հեթանոսութեան հետ մղած պայքարի ժամանակ պէտք է աւելի շուտ փրկիսոփաների ճակատամարտի դաշտը ելնել համարձակուէին, մանաւանդ որ այն ժամանակ փրկիսոփաները Մարկոս Աւրելիոսից սկսած մինչև Յուլիանոսը գահի վրա էին նըստած: Բանակուի, պայքարի միջոցով մշակվում է վարդապետութիւնը:

Որքան շատ բան է արել արդէն Աստուած աշխարհի չարիքը բժշկելու համար: Մովսէսի ժամանակ նա հրաշք հրաշքի վերայ է գործել, ապա Քրիստոսի կերպարանքով նա իրան թոյլ տուաւ ձաղկելու ու խաչելու անգամ. ի վեր-

շոյ Անֆանտէնի անձի մէջ նա ամենից
վիթխարի բանը գործեց աշխարհը փրկելու
համար. նա իրան ծիծաղելի դարձրեց—բայց
իզո՞ւր: Ի վերջոյ գուցէ նա յուսահատութեան
կամ խեղազարութեան հասնի և իւր գլուխը ջարդի
աշխարհի վրայ և նա ու աշխարհը կկործանուեն:

Փիլիսոփաները իրանց կռուի մէջ կրօնի
դէմ խորտակեցին հեթանոսական կրօնը, բայց
մի նորը, քրիստոնէականը առաջ եկաւ: Դորա
բանն էլ շուտով լմնցաւ կատարուեց, սակայն,
անտարակոյս, կգայ մի նորը, և փիլիսոփաները
կրկին նոր աշխատանք կունենան, այնուամենայ-
նիւ դարձեալ իզուր: Աշխարհը մեծ գոմ է, որ
այնքան էլ դիւրին կերպով չէ կարող մաքրուել,
որպէս Աւգիասի գոմը, որովհետեւ մինչդեռ
նա մաքրվում աւելվում է, եզները մնում են
մէջը և միշտ նոր աղբ են կուտակում:

Խաւար ժամանակներում ազգերը ամենից
լաւ առաջնորդվում են կրօնի միջոցով, որպէս
խիստ մութ գիշերին կոյրը մեր լաւագոյն ռա-
վիրան, ճանապարհ ցոյց տուողն է. նա ճանա-
պարհը և շաւիղներն իսկ աւելի լաւ է ճանա-
չում, քան մի տեսնող: Սակայն յիմարու-
թիւն է, երբ լոյս է, դարձեալ հին կոյրերին որպէս
ճանապարհ ցոյց տուողներ վերցնել:

Նախկին կրօնների մէջ ժամանակի ոգին
արտայայտվում էր մի քանի եզակի մարդկանց
միջոցով և հրաշքի միջոցով հաստատվում էր:
Ներկայ կրօնների մէջ ժամանակի ոգին շատ
մարդկանց միջոցով է արտայայտվում և բանա-
կանութեան միջոցով հաստատվում: Այժմ այլ
ևս ոչ մի հրաշք գոյութիւն չունի բնագիտու-
թեան կազմակերպուելուց յետոյ. Օկէնը նայում
է Աստուծու մատներին և Նա՛ Աստուած չի կա-
մենում Բօսկօի հետ մրցել:

Պասմութեան մէջ արդեօք նոյնպէս գոյու-
թիւն ունեն օր և գիշեր որպէս բնութեան մէջ:
Քրիստոնէութեան երրորդ դարից սկսած տիրում
է երեկոյեան մութը, նոր պղատոնեանների ե-
րեկոյեան տխուր, թախծալից վերջալոյսը, մի-
ջին դարերը թանձր խաւար, մութ գիշեր էին
ներկայացնում, այժմ առաւօտեան արշալոյսն է
ծագում—ողջունում եմ քեզ, Փերոս Ապողոհն:
Որպիսի՞ երազներ, որպիսի՞ ուրուականներ, որ-
պիսի՞ գիշերաշրջիկներ, որպիսի՞ փողոցային
աղմուկ, կոիւններ և սպանութիւններ—ես այդ
մասին յետոյ կպատմեմ:

Ես տեսնում եմ անցեալի հրաշքները բոլո-
րովին պարզ կերպով: Մի վարագոյր է ձգուած
ապագայի վերայ, բայց վարդագոյն, և նրա

միջից փայլում են ոսկէ կոթողներ և գոհարներ ու քաղցրալուր ձայներ են հնչում:

Կաթուղիկ գրողները լաւ գէնքեր ունեն, բայց նրանց գործածել չգիտեն: Չինացիներ իման, նրանք լաւ թնդանօթներ ունեն, նոյնպէս վառօդ և գնդակներ, բայց արձակել իմանալը՝ բոլորովին ուրիշ բան է: Նրանք երեխաներ են մեծ սրերով, որոնց նրանք չեն կարող բարձրացնել, սաղաւարտներով, որոնք նրանց գլուխները ծանր կերպով ճնշում են: Իսկ թնդանօթների հետ նրանք բոլորովին չեն կարող վարուել, գործ չինել:

Հռովմէական եկեղեցին հաւատ չէ ընծայում իւր ժամանակակից սէյիդներին, նա վախենում է, որ սա կամ նա իւր նախանձախնդիր համախոհներից, երբ և իցէ, նրա հողաթափը համբուրելու փոխարէն, կատաղի եռանդով նորա ոտը կկծէ:

Հռովմէական եկեղեցին մեռնում է այն հիւանդութիւնից, որից այս աշխարհում ոչ ոք չէ բուժւում՝ ժամանակի ոյժի շնորհիւ սպառումից: Իմաստուն, որպէս նա է, նա մերժում, հեռացնում է բոլոր բժիշկներին. նա իւր երկարատև կեանքի պրակտիկայի ընթացքում յաճախ շատ

ծերունիներ է տեսել, որոնք մեռել են աւելի վաղ և քան պէտք էր, միայն այն պատճառով, որ եռանդոտ և լաւ բժիշկներ ցանկացել են նրանց բժշկել: Սակայն նրա հոգևորը տակաւին երկար կտևի: Նա մեզանից ամենքից էլ աւելի կապրի, այդ տողերը գրողից, գրաշարից, որ շարում է այդ յօդուածը, տպագրողից, նոյն իսկ փոքրիկ աշակերտից, որ բերում տանում է տպագրական թերթերը:

— Աստուած ոչինչ չէ ցոյց տուել, յայտարարել, որ անմահութիւնը հաստատէր. Մովսէսն այդ մասին նոյնպէս ոչինչ չի ասում: Գուցէ Աստուած բնաւ գոհ չէ, որ բարեպաշտ մարդիկ այդպէս զօրեղ կերպով հաւատում են անմահութեան: Իւր հայրական բարութեան մէջ գուցէ նա ցանկանում է մեզ պատրանք պատճառել:

Քրիստոնէութիւնը համարձակ քայլում է դէպի միսիթարութիւն. նրանք, որոնք այս կեանքում առատօրէն երջանկութիւն են վայելել, բախտի սիրելիներն են եղել, ապագայ կեանքում դորանից ստամոքսի խանգարում կունենան, անմարսութիւնից կփխսեն, — նրանք, որոնք շատ սակաւ են կերել այս կեանքում, ապագայում պատրաստի կգտնեն և կվայելեն ամենից լաւ, համագամ խորտիկներ. երկրաւոր, այս աշխարհի ծե-

ծերից մարմնի վրա մնացած բծերը, հետքերը հրեշտակները կշնջեն:

Հեթանոսութեան (հնդիկների, պարսիկների), տարբերութիւնը հրէութիւնից հետեւեալն է. նրանք ամենքը՝ հեթանոսները, հաւատում են անսահման, յաւիտենական Նախէակին, սակայն նրանց մօտ այդ Նախէակը աշխարհումն է, գլխաւորում, որի հետ նա նոյնն է, և նա կազմվում, զարգանում է սորա հետ միասին անհրաժեշտութեան օրէնքից. — բայց հրէաների Աստուածը աշխարհից դուրս է, և այս աշխարհի ստեղծագործութիւնը Նորա ազատ կամքի գործողութիւնն է:

Հեթանոսութիւնը շնորհում և խոստանում էր երկրաւոր բարիքներ, ուստի բազմաւոր մարդիկ, որոնք իւրեանց ցանկութիւնների իրագործութեան և իւրեանց ձեռնարկութիւնների աշտուղութեան մէջ խիստ գլխած աստուածների ղէպի նրանց տաժած սիրոյ և տրամադրութեան ապացոյց էին տեսնում, նրանց՝ աստուածների աւելի բարեպաշտ, երկրպագութեան երկրպագուներ էին սովորաբար, քան դժբաղդ մարդիկ:

Մի տաճար ղիտելիս: Վեց հարիւր տարի տեւել է քո շինութիւնը, և դու մի ընդհատ մէջ

վեցհարիւրամեայ աշխատութիւնից յետոյ հանգիստ ես վայելում: Ծովի ալիքների նման քո մօտից սերունդներ են անցել և տակաւին ոչ մի քար չի շարժուել իւր տեղից: Կաթոլիկութեան այդ դամբարանը, որ նա կառուցել է իւր համար տակաւին կենդանութեան ժամանակ, հանգած զգացմունքի քարէ քօղ, ծածկոյթ է. — բարձրում ժամացոյցը հեզնօրէն է բանում: Այդ քարեայ տան մէջ մի ժամանակ կենդանի խօսքն էր ծաղկում. այժմ նրա մէջ այդ խօսքը մեռած է և դեռ ապրում է միայն արտաքին քարեայ կեղևի մէջ. (ծառի դատարկ խոռոչ):

Յարգանք Հռովմի համար: Որքան շատ մարդիկ դուրս են եկել հռովմէական եկեղեցին անարգելու, թշնամանալու նորա հետ և յանկարծ փոխել են իւրեանց միտքը, տրամադրութիւնը, ծունկ են չոքել և աղօթել են: Շատերի հետ պատահել է նոյնը, ինչ որ պատահեց Բաղամի՝ Բօէրի որդու հետ, որ գնաց Իսրայէլին անիծելու, մինչդեռ իրօք նորան օրհնեց: Ինչո՞ւ այդպէս եղաւ: Սակայն չէ՞ որ նա նրա էջի ձայնը լսեց միայն:

Իօհաննէս Ֆօն Միւլլերի գրութեան հետ կրկնվում է նոյնը ինչ որ և Կլօպշտօկի երկերի հետ. ոչ ոք չի կարգում այն, բայց ամենքը

յարգանքով են խօսում նրա մասին: Միւլլերը մեր մեծ պատմաբանն է, ինչպէս Կլօպշտօկը մեր մեծ վիպական բանաստեղծն էր, որին մենք պարծանքով արտասահմանեան հռչակաւոր գրողներին էինք մենք հակադրում: Նա անչափ ձանձրալի է:

— Ալպեան լեռներ, և նրանց վերայ ոչ մի գաղափար: Մենք կարծում էինք: որ վէպ և պատմաբան ունենք:

Համբուրգի հրէաների ապստամբութեան համար 1830 թ. Սեպտեմբերին բնորոշ է, որ հրէայ յեղափոխականները առաջ իրենց օրուայ գործերը վերջացրին, իսկ յետոյ երեկոյեան յեղափոխութիւն կատարեցին:

Խռովութեան ժամանակ ես Փան Ակենի գաղանացուցումն էի. ամենից հանգիստ էր երևում առիւծը՝ լի վսեմ գայրոյթով, կապիկները ուրախանում էին, օձերը օղակներով դալարվում էին: Բորենին անհանգիստ կերպով այս ու այն կողմն էր գնում, սպիտակ արջը փառաւոր կերպով, հանգիստ պառկած էր և սպասում էր, բամբակեօնը ամեն ընդէ փոխում էր իւր գոյնը, կարմիր, կապոյտ, սպիտակ, վերջապէս մինչև անգամ եռագոյն դարձաւ:— Գաղանները իրենց պահում էին խելացի մարդկանց պէս, իսկ մարդիկ, ընդհակառակն, գաղանների նման

կատաղած էին: Մի հրէայ ասաց մի ուրիշին. «Ես խիստ թոյլ էի»: Այս խօսքերը կարելի է հրէական պատմութեան համար որպէս նշանաբան ընդունել: Մէկը ֆրիններից՝ անառակ կանանցից, որ կանգնած էր քաղաքի դռներից մէկի մօտ, ասաց. «Եթէ այսօր անարգում են հրէաներին, վաղը այդ կանեն սենատի՝ ծերակոյտի դէմ և վերջը մեր դէմ»: Ո՛վ, փողոցային կասսանդրա, որպէս շուտ կատարուեցին քո խօսքերը:

Ա. ես ևս այդպէս կանէի: Եթէ մեր Փրկիչը միակը լինէր, որ առաջ է եկել այդ ցեղից—բայց այդ ցեղից նոյնպէս այնքան շատ անպիտան զգուելի մարդիկ են դուրս եկել, որ որեւէ ազգականութիւն ճանաչել նրա հետ,—խիստ վտանգաւոր գործ է:

Բ. Եթէ ես այն ցեղին պատկանէի, որից ծագել, սերել է մեր Փրկիչը, աւելի շուտ ես կը պարծենայի դրանով քան կամաչէի:

Յախճապակու համար, որ հրէաները երբեմն պէտք է ընէին Սաքսոնիայում, նրանցից նրանք որոնց մօտ պահպանուել է այն, այժմ հարիւր անգամ աւելի գին դրամ կստանան: Վերջի վերջոյ Իսրայէլը կվարձատրուի իւր զոհերի համար

ամբողջ աշխարհի գովքի շնորհիւ, փառքով և մեծութեամբ:

Գերմանիայում քրիստոնէութիւնը միաժամանակ տեսականապէս, թէօրիայի մէջ տապալվում է և իրականապէս՝ արդիւնագործութեան և բարօրութեան կատարելագործութիւն է տեղի ունենում:

Որպէս գիտութեան մարդիկ միջնադարեան քրիստոնէական շրջանում ջանք էին գործ դնում Աստուածաշնչի մէջ գիտական ճշմարտութիւններ գտնելու, բանալու, նոյնպէս այժմ՝ կրօնի մարդիկ՝ աստուածաբանները, ձգտում են աստուածաբանական ճշմարտութիւններ գտնել գիտութեան մէջ՝ պատմութեան, փիլիսոփայութեան, ֆիզիկայի՝ բնագիտութեան մէջ. երրորդութեան վարդապետութիւնը հնդկական առասպելաբանութեան մէջ, մարմնացման մասին վարդապետութիւնը տրամաբանութեան՝ լոգիկայի մէջ. ջրհեղեղը երկրագիտութեան մէջ և այլն:

Իւրաքանչիւր կրօն ըստ իւր տեսակի միութարութիւն է շնորհում դժբաղդութեան մէջ: Հրէաների մօտ յոյսն է. «Մենք գերութեան մէջ ենք. Եհովան բարկանում է մեզ վրայ, բայց Նա մեզ մի փրկիչ կղրկի»: Մահմեդական-

ների մօտ ճակատագրականութիւնն է. «Ոչ ոք չի կարող խուսափել իւր ճակատագրից, նա գըրուած է երկնքում քարեայ տախտակների վրա. տանենք խոնարհութեամբ ամեն բան, ինչ որ նախասահմանուած է. Ալլահ իլ Ալլահ»: Քրիստոնեաների մօտ հոգեպաշտական ասեղութիւն դէպի հաճելին և ուրախութիւնը, վշտալի ձրգտում դէպի երկինք, աշխարհում երկրիս վրա՝ սատանայի փորձութիւն, միւս աշխարհում՝ վարձատրութիւն:

Աշխարհի մեծութիւնը, փառահեղութիւնը միշտ համապատասխան է ոգու մեծութեան, որ գիտում է այն՝ աշխարհը: Բարի մարդը այստեղ երկրիս վրա գտնում է իւր դրախտը, իսկ չար մարդը արդէն այստեղ վայելում է իւր դժոխքը:

Մեր բարոյական գաղափարները բնաւ օգի մէջ չեն սաւառնում. մարդի ազնուացումը, արդարութիւնը, անմահութիւնը. այս բոլորը բնութեան մէջ իրական հիմք ունի: Այն ամենը, ինչ որ մենք գաղափարով տեսականօրէն սրբազան ենք ճանաչում, իրօք գոյութիւն ունի և բնաւ ցնորք, տեսիլ չէ:

Այսպիսի սրբերը, որպէս Ստիլիտը ¹⁾, ներ-

¹⁾ Սիմէօն Ստիլիտ (390 թ. յ. Գ). 30 տարի շա-

կայ ժամանակում անհնարին են, որովհետև մարդասիրութիւնը իսկոյն նրանց կտանէր կփակէր խելագարների տան մէջ:

Ամեն մի գիրք ժամանակ է պահանջում իւր աճման համար, որպէս ամեն մի երեխայ: Արագ և մի քանի շաբաթների ընթացքում գրութեան գրքերը իմ մէջ որոշ նախապաշարմունք են զարթեցնում հեղինակի դէմ. ազնիւ կինը երեխայ է ծնում ինն ամիս յղի լինելուց յետոյ, բայց ոչ առաջ:

Բանաստեղծը մի երկ ստեղծագործելիս իւր հոգու մէջ այնպէս է զգում, կարծես նա՝ ըստ Պիւթալիորեանների հոգեփոխութեան վարդապետութեան, բազմազան կերպարանքներով նախնական կեանք է վարել—նորա ոգևորութիւնը, յայտնատեսութիւնը, որպէս յիշողութիւն է պատկերանում մեզ:

Յոյների մէջ կեանքի և բանաստեղծութեան՝ պօէզիայի նոյնութիւն էր տիրապետում: Ուստի նրանք չունէին այնպիսի մեծ բանաստեղծներ, որպէս մենք, ուր կեանքը յաճախ բանաստեղծութեան հակասութիւնն է կազմում: Շէքսպիրի բունակ ապրում և բարոգում էր Անտիոքում, 80-ոմ բարձրութիւն ունեցող ժայռի վրա: Ծանօթ. Թարգ.

ոտի բթամատը աւելի շատ բանաստեղծութիւն է բովանդակում իւր մէջ, քան բոլոր յոյն բանաստեղծները բացի Արիստոֆանէսից: Յոյները մեծ արուեստագէտներ էին, բայց ոչ բանաստեղծներ. նրանք աւելի արուեստի ճաշակ ունէին քան բանաստեղծութեան: Արձանագործութեան մէջ նրանք այնպիսի հռչակաւոր երկեր արտադրեցին այն պատճառով, որովհետև այստեղ նրանք պէտք է միայն իրականութիւնը ընդօրինակէին, որ բանաստեղծութիւն էր և նրանց լաւագոյն օրինակներ էր շնորհում:

Գեղարուեստական սրկը: Տեսանելի երկը ներդաշնակօրէն անտեսանելի գաղափարն է արտայայտում. ուստի ապրելու արուեստը ներդաշնակութիւն է կազմում գործողութեան և մեր մտքերի մէջ:

Գեղարուեստական երկը զեղեցիկ է, երբ աստուածայինը մտերմօրէն միանում է նրա մէջ մարդկային հետ.—Անահիտը համբուրում է Էնդիմիօնին. նա վսեմ է, երբ մարդկայինը բռնի կերպով, ուժով դէպի աստուածայինն է վերանում, սլանում—Պրոմէթէոսը չի ցանկանում խոնարհուել Արամազդի առաջ, Ագամեմնոնը իւր գաւակին զոհ է բերում, Պատկերացումը Քրիստոսի մասին զեղեցիկ է և վսեմ միաժամանակ:

Սրձանագործը, որ միաժամանակ քանդակում է նապօլէօնին և Վելլինգտօնին, իմ կարծիքով, նման է այն քահանային, որ ժամի տասին եկեղեցում պատարագ է ցանկանում մատուցանել, իսկ ժամի տասներկուսին — սինագոգում երգել, ինչո՞ւ չէ. նա կարող է այդ անել. բայց այնտեղ, որտեղ այսպիսի բան կպատահէր, ժողովուրդը շատ շուտով կդադարէր և՛ եկեղեցի և՛ սինագոգա, յաճախելուց։

Բանաստեղծների համար աւելի ևս դժուար է երկու լեզուով խօսել. աւանդ, շատերը նրանցից հազիւ կարողանում են մի լեզուով խօսել։

Լեզենդան՝ աւանդութիւնը քանդակագործի մասին, որի աչքերը հանել են նրա համար, որ նա այլ ևս չկարողանայ մի այնպիսի արձան էլ պատրաստել, նոյն հիմքն ունի, ինչ որ և այն բաժակը կոտրելու սովորութիւնը, որով մի բարձրաստիճան անձի կենացն են խմել։

Բնածին գաղափարների, իդէաների խնդիրը կարող էր կանոնաւոր, ճիշտ կերպով լուծուել հետեւեալ կերպով. կան մարդիկ, որոնց ամեն ինչ դրսից, արտաքուստ է գալիս, այսպէս կոչուած տաղանդներ, որպէս Լեսսինգ, որոնք կապիկներին են յիշեցնում, որոնց մօտ արտաքին նմանողութեան ընդունակութիւնն է տի-

րոււմ. նրանց խելքի մէջ չկայ մի բան, որ արտաքին զգացմունքների միջոցով ընդունուած չլինէր։ Սակայն կան և այնպիսի մարդիկ, որոնց մօտ ամեն ինչ հոգուց է բղխում — հանճարներ, որպէս Բաֆայէլ, Մոցարտ, Շէքսպիր, բայց այդպիսի մարդկանց ծննդեան պրօցեսսը աւելի դժուար է, լինում քան այսպէս անուանուած տաղանդների համար։ Սրանց տաղանդների մօտ նա ոչ այլ ինչ է եթէ, ոչ առանց կեանքի, առանց ներքին ոյժի սոսկական արտադրութիւն, պարզ մեքենայական գործողութիւն, իսկ հանճարների մօտ՝ կենդանի օրգանական ստեղծագործութիւն։

Մեր քնարերգութիւնը հոգեպաշտութեան արդիւնքն է, չնայած, որ նրա նիւթը զգայական է. այդ՝ մենաւոր, առանձին կեցած ոգու ձգտումն է արտաքին երևոյթների աշխարհի հետ ձուլուելու։ Զգայականութեան յաղթանակը այդ քնարերգութեան մահը առաջ կբերի, հանգէս կըգայ ձգտում դէպի ոգին. զգայունութիւնը, որ առաւել ու առաւել մութ, ամպամած է դառնում, ոչնչական նիհիլիստական ծամածուծութիւն, ֆըրազների անբովանդակ մշուշը եղածի և սկսողի միջև միջանկեալ կայարան, միտումաւոր բանաստեղծութիւն է։

Անմեղ անհոգ բանաստեղծը, որ յանկարծ

քաղաքական է դառնում, յիշեցնում է ինձ օր-
օրոցի մէջ եղած երեխային. «հայրիկ, մի կեր
այն, ինչ որ ֆայրին է եփել»:

Բանաստեղծների աշխարհում երրորդ դա-
սակարգը ոչ միայն օգտակար չէ, այլ և ֆա-
սակար է:

Ռամկապետութեան տիրապետութիւնը գը-
րականութեան վախճանն է առաջ բերում. ոճի
ազատութեան և հաւասարութեան: Իւրաքան-
չիւր ոք կարող է գրել ըստ իւր ցանկութեան,
այնքան վատ, որքան հաճելի է իրան, և սա-
կայն ոչ ոք իրաւունք չունի ոճի տեսակէտից
նրանից բարձր, գերազանց լինել և նրանից լաւ
գրել:

Ռամկավարութեան, դեմօկրատիայի իսկա-
կան տիրապետութեան հետ միաժամանակ ամեն
տեսակ բանաստեղծութիւն կունենայ իւր վերջը,
կմեռնի: Որպէս անցում դէպի այդ վերջը տեն-
դենցիական, միտումաւոր բանաստեղծութիւնը
կլինի: Ահա ինչու ռամկավարականները այդպէս
հովանաւորում են և համակրում այն, չէ թէ
միայն նորա համար, որ նա ռամկավարական
նպատակներին է ծառայում: Նրանք գիտեն, որ
Հոֆման ֆօն Ֆալլերսլեբենից յետոյ, կամ, աւելի

ճիշդ, նորա հետ վերջանում է բանաստեղծու-
թիւնը:

Ռամկավարութիւնը ասում է պօէզիան՝
Պարնասը պէտքէ քանդել, հողի հետ հաւասա-
րացնել, խճով յատակել և այնտեղ, ուր երբեմն
ժայռից ժայռ, բլրից բլուր էր ելնում ազատ
բանաստեղծը, այնտեղ շուտով հարթ սլոդոտայ
կշինուի, երկաթուղի կանցնի, որի վրա շոգե-
մեքենան կխրխնջայ, սլանալով միշտ գործերով
զբաղուած հասարակութեան մօտով:

Մ Ռամկավարականները կատաղում են այն
բոլոր մարդկանց դէմ, որոնք սէրն են երգում...
ինչո՞ւ երգել վարդը, արիստոկրատ: Երգիր դե-
մօկրատական գետնախնձորը, որ կերակրում է
ժողովրդին:

Մ Այնպիսի ժամանակ, երբ քաղաքական շա-
հերն են տիրապետում, խիստ սակաւ կարող է
որ և է բուն գեղարուեստական երկ երևան գալ:
Բանաստեղծը այսպիսի ժամանակ նման է ալե-
կոծ ծովի մէջ գտնուող լուղորդին, որ տեսնում
է հեռւում, ափի ժայռի վրա մի վանք. ճերմակա-
զգեստ կոյսերը կանգնած այնտեղ երգում են,
բայց փոթորկի աղմուկը խլացնում է նրանց
երգեցողութիւնը:

Գեղեցիկ բանաստեղծութիւն ստեղծեց չէթէ աղքատ հունգարացի Նիմբօ ¹⁾, կամ Լիպպէ Դեմոօլֆում ծնուած առեւտրականը, այլ համաշխարհային ոգին: Այս գէպքում փառքը միայն նորան է պատկանում, և ծիծաղելի է, եթէ այդ երկու վերոյիշեալ անձինք գէթ փոքր ինչ պարծենում են դորանով, զրեթէ այնպէս ինչպէս հայր Բաշելը իւր աղջկայ աշողութեամբ. ծերունի հրէան կանգնած է ֆրանսիական թատրոնի պարտերում և երեւակայում է, որ նա է Իֆիգենիան կամ Անդրոմախան, որ այդ նրա խաղն է, նրա պերճախօսութիւնն է ամենքի սրտերը յուզում, և երբ ծափահարում են, նա գլուխ է տալիս, բարևում է կարմրելով:

Սովինին հռովմայեցի՞ է. Ո՛չ, նա հռովմէական ոգու ծառան է:

Սովինիի ոճի պերճութիւնը նման է կաշոյ արծաթագոյն լորձնի, որ թողնում են միջատները ախտեղ, ուր որ նրանք սողացել են:

Բաումէրը՝ պատճառաբանող կաշի է, Բրօկ հաուզի գրավաճառանոցի գրականական փոքր ծառան. ժամանակով, երբ նա կմեծանայ, գրավաճառանոցի պահապան կլինի:

¹⁾ Լենաու բանաստեղծը իրօք կոչվում էր Նիմբօ Փօն Ստրեկենաու:—

Գերվինուսի «Դրականութեան պատմութիւնը»: չեղինակի խնդիրն էր. այն, ինչ որ Հայնրիխ Հայնէն խիստ խելացի արտայայտել է մի փոքրիկ գրքոյկի մէջ, այժմ առանց խելքի և առանց մտքերի մի մեծ գրքի մէջ տալ, արտայայտել: Խնդիրը շատ լաւ է լուծուած:

Պատմաբանները, որոնք իրանք ցանկանում են ամբողջ պատմութիւնը շինել, կատարել, նման են այն կատակերգակ դերասաններին Գերմանիայում, որոնք մոլութիւն ունէին իրանք գրել պիէսները: Հալլէրը նկատում է, որ բեմի վրայ այնքան աւելի լաւ են խաղում, որքան աւելի վատ է պիէսն: Եւ ահա հարց է ծագում. նրանք վատ են գրում իրանց լաւ դերասաններ ցոյց տալու համար, թէ վատ են խաղում լաւ գրողներ երեւալու համար: Նոյն այդ հարցերը կարելի կլինէր մեր պատմաբաններին առաջարկել:

Զգուշացէ՛ք Հենգստենբերգից. նա յիմար է՝ ձեռնում միայն: Այդ Բրուտոսն է, որ ժամանակով վայր կձգի իւր դիմակը, իրան խելացի հաւատացող ցոյց կտայ և ձեր թագաւորութիւնը կտապալի:

✓ Բուզէն*) աներես մարդ է, ֆիլիստեր է, մի անգամ անաչառ կերպով նայեցաւ հայելու մէջ և խոստովանուեց, որ Բելվեդերի Ապոլլոնը այնուամենայնիւ իրանից աւելի գեղեցիկ է: Իւր ոգու մէջ նա արգէն կրում է ազատութիւնը, բայց նրա անդամների մէջ նա՝ ազատութիւնը տակաւին չի ցանկանում սերս մտնել և, չնայած որ նրա համակրութիւնը դէպի հելլենական մերկութիւնը ոգևորութեան աստիճանին է հասնում, նա, սակայն, չի կարողանում վճռել հանել իւր վրայից բարբարոսական ժամանակակից նոր վարտիկները, կամ բարոյականութեան քրիստոնէական գերմանական անդրավարտիկները: Շնորհալի, գեղեցիկ դիցունիք՝ զրացիաները ծիծաղադէմ նայում են այդ ներքին կռուի վրայ:

✓ Յակոբ Վենետի**): Բնութիւնը քեզ ստեղծել է

*) Արնոլդ Բուզէն ծնունդ է 1802 թ. եղել է հրապարակախօս փիլիսոփայ. 1849 թ. դեմօկրատական շարժման մասնակցելու համար փախել է Անգլիա: Սրանից առաջ գերման. հանդէսների խմբագիր է եղել, մի ժամանակ Կարլ Մարքսի հետ սկսեց Պարիզում հրատարակել «Գերման.—Ֆրանսիական հանդէս»: Ֆրանկֆուրտի պարլամենտի մէջ ծայրահեղ ձախակողմեան ֆրակցիային էր պատկանում: Անգլիայում Մաձինիի, Լեդբիւ-Րոլլէնի հետ հիմնեց եւրոպական դեմօկրատական միութիւնը: 1866 թ. Գերմանիայի միացման թունդ կողմնակից էր. մեռաւ. 1880 թ. Ծ. Թ.

**Վենետէյն քաղաքական գրող է եղել. ծն. 1805 թ. † 1871 թ. ծ. թ.

արտաքնոցների մաքրող... Մի ամաչիւր դորանից, գերմանական հայրենասէր: Դու մաքրում ես քո գերմանական հայրենիքի արտաքնոցները:

Ես կլուեմ նորա մտաին, ես չեմ կարող նրանից օգտուել, որպէս կօմիքական անձից այնպէս, ինչպէս ես այդ անում եմ Մասմանի հետ: Ծիծաղելին այդտեղ այն էր, որ Մասմանը լատիներէն գիտէր. իսկ Վենետէյն բնաւ չգիտէ. տխրութեան, ձանձրոյթի մէջ ծիծաղելի, կօմիքական բան չկայ:

Լուդովիկոս Թագաւորը չի ընդունում Լութերին իւր Վալհալլայի մէջ: Այդ բանի համար չպէտք է նորա վերայ բարկանալ. նա իւր սրբտի մէջ զգում է, որ եթէ Լութերը Վալհալլա կառուցանէր, նրան այնտեղ չէր ընդունիլ, որպէս բանաստեղծի:

Էստէ, Մեդիչի, Գօնզագա, Սկալա իշխանները հռչակաւոր են, որպէս մեկենասներ: Մեր գերմանական իշխանները, անկասկած, նոյն բարի կամքն ունեն՝ մեկենաս լինելու, բայց նրանց պակասում է կրթութիւն ճշմարիտ, բուն տաղանդներ և հանճարներ գտնելու համար, որովհետեւ սրանք չեն տեղեկացնում իրենց մասին նրանց ծառաների միջոցով: Մեր իշխանները նրանց են հովանաւորում միայն, որոնք ի-

րենց ուսմամբ, կրթութեամբ նրանց՝ իշխանների հետ մի հաւասար աստիճանի վրայ են գտնուում. և ինչպէս իտալական իշխաններին ճանաչում են, երբ անւանում են նրանց հովանաւորեալներին, այնպէս ևս ժամանակով կճանաչեն մերոնց, երբ կանուանեն այն մարդկանց, որոնց տփեր, բաժակներ, թոշակներ և շքանշաններ են շնորհել: Ասում են, որ մեծ գրողների կողմից անմտութիւն է սովորական, մանր գրողների անունները գալոց սերնդի համար յարուցանելը, թէպէտև կծու, հեզնական նկարագրի միջոցով. բայց մենք այդ նորա համար ենք անում, որ ամաչեցնենք նրանց մեկենասներին:

✓ Այդ մարդկանց պէտք է իրենց կենդանութեան ժամանակ փայտերով ծեծել, որովհետև նրանց մահից յետոյ նրանց արդէն չի կարելի պատժել, չի կարելի խայտառակել, ծաղրել, պարսաւել նրանց անունը, որովհետև նրանք իրենցից յետոյ ոչ մի անուն չեն թողնում:

✓ Վօլֆգանգ Մենցելը*) ամենից սրամիտ գլուխն

**) Վօլֆգանգ Մենցել, քննադատ և պատմաբան էր, ծնուեց 1798 թ. երկար տարիներ խմբագիր էր գանազան գերման. թերթերի. Մենցելը Գեթեի և նրա դպրոցի թունդ հակառակորդ էր, ապա և «Երիտասարդ Գերմանիայի» ասել է՝ Հայնէի և Բեօրնէի: 1848 թ. աւանի անցքերը Մենցելին դարձրին Ֆրանսիայի թունդ

է. գիտութեան համար հետաքրքիր և կարևոր կլինի, եթէ նորա գանգը ժամանակով ապագայում գանգաբանական հետազոտութիւններին ենթարկուի: Ես ցանկանում եմ, որ նրանք որոնք ծեծում են նորան, խնայէին գլուխը, ապա թէ ոչ գանգաբանները գլխի նոր կլոր ուռոյցները սրամտութեան և պօէզիայի ուռոյցների տեղ կընդունեն:

✓ Եւ այդ տգէտ նապաստակը իրան գերմանական ազգի ասպետ, առաջնորդ է ցոյց տալիս, ամենից քաջ և ամենից գիտուն ազգի, ազգի, որ ապացուցել է իւր քաջութիւնը կռուի հազար դաշտերի վերայ և հարիւր հազար զրքերի մէջ ցոյց է տուել իւր նրբամտութիւնը և խորին գիտութիւնը, ազգի, որի լայն կուրծքը փառաւոր սպիներով է պատած և որի ճակատի վերայից անցել են աշխարհի բոլոր մեծ մտքերը և իրենց ետևից թողել են ամենից պատւաւոր խորշոմներ:

✓ Գուցկով. Բնութիւնը խիստ համեստ էր, երբ նա ստեղծեց նորան՝ մարդկանցից ամենից անհամեստին:

Թշնամի: Մենցելը խիստ բեղմնաւոր գրող էր: Իւր բոլոր գրուածների մէջ նա թունդ միապետական էր և ծայրայեղ ազգայնական, նացիոնալիստ: Մեռաւ 1873 թ. ականին. Մ. Թ.

Նա ցանկացաւ նմանել Հայնէին, բայց դրա համար նորա մօտ բացակայում էր ամեն տեսակ բանաստեղծութեան շնորք, և նա միայն կարողացաւ Բեօրնէին նմանելու աստիճանին հասնել: Նորա նկարագրի և լեզուի մէջ ինչ որ ուստիկանական բան կայ: Նա միշտ դարան մտած՝ դիտում է հասարակութեան ներկայ, առօրեայ թոյլ կողմերը, իւր անձնական շահերի համար նրանց շահագործելու մտքով: Հովանաւորելով և շողորթելով այդ թուլութիւնները, նա դիւրին կերպով կարող է առանց տաղանդի, առանց գիտական տեղեկութիւնների, առանց բնաւորութեան կառավարուել, եօլա գնալ, և նա այդ գիտէ: Նա հասարակութեան ոչ մի զարկ չի տալիս իւր կողմից, բայց ստանում է այն-զարկը նորանից. նա հագնում է օրուայ գաղափարի, ներկայ ընկած կարևորութիւն ունեցող խնդրի հագուստը. նա նորա սպասաւորն է, նորա դիւանատան ծառայողը, նա սողում է նորա առաջ ստրկի խոնարհութեամբ և այդ բանի համար օղու դրամ՝ խմելու փող է պահանջում իւր համար:

Ժիսկէն ¹⁾ պատմում է իւր յիշողութիւնների երրորդ մասի մէջ մի ուստիկանական գործակալի

1) Ժիսկէ-ուստիկանութեան պրեֆեկտէր Լուդովիկոս Փիլիպպոսի ժամանակ:

մասին, որ շքադրամներ՝ մեդալներ, գողացած գողին գտաւ այն նրբութեան շնորհիւ, որով կատարուած է եղել յանցանքը. գեղեցիկ հիւսուած պարան, մի կտոր մեղրամոմ գողի լապտերի մէջ ճարպեայ մոմի տեղ... Այսպէս ես ճանաչում եմ պարոն * * * անանուն յօդուածի մէջ:

Ինչո՞ւ պէտք է ես այժմ հակասեմ, պատասխանեմ: Մի քանի տարուց յետոյ ես կմեռնեմ և այն ժամանակ ակամայ պէտք է տանեմ, համբերեմ մի սուտ իմ մասին: Պարոն * * * բնաւ չպիտի վախենայ, որ նորա մահից յետոյ սուտ կը խօսեն նորա մասին:

Գրաբքէի «Գօտլանդ» ողբերգովիւնը: Երբեք երբեք սարսափելի և զգուշի մտքերի մի ամբողջ շարք, որպէս թիավարութեան դատապարտուածներ (տաժանակիրների) մի շարք, սրոնցից իւրաքանչիւր խարանուած է... Հեղինակը տանում է նրանց շղթայակապ դէպի պօէզիայի գալլերները՝ թիավարութեան նաւերը:

Գերմանական լեզուն ինքն ըստինքեան հարուստ է, բայց գերմաներէն խօսակցութեան հազիւ միայն տասներորդ մասից ենք օգտւում. այս կերպով լեզուի կողմից մենք իսկապէս աղքատ ենք:

Ֆրանսիացիք գիտեն խօսակցութեան ժամանակ քաղել նրանցից այն ամենը, ինչ որ նո-

րա մէջ պարունակվում է, ուստի նրանք լեզ-
ւի կողմից իրօք հարուստ են:

Միայն գրականութեան մէջ գերմանացիք
ցոյց են տալիս իւրեանց լեզուի ամբողջ հա-
րստութիւնը, գանձերը, և ֆրանսիացիք զրանով
կուրացած՝ Աստուած գիտէ ինչ հրաշքներ են
երևակայում մեր տնային նիստուկացի մասին
այդ կողմից. նրանք անգամ գաղափար չունեն,
որքան սակաւ մտքեր ունենք մենք մեր տանը
կիրառութեան համար: Յրանսիացիների մօտ
ճիշդ հակառակն է. հասարակութեան մէջ աւելի
շատ մտքեր կան քան գրքերի մէջ և ամենից
խելացի և տաղանդաւոր մարդիկ նրանց մէջ կամ
բնաւ ոչինչ չեն գրում, կամ գրում են միայն
պատահաբար:

✓ Վօլտերը խիզախօրէն վեր է թռչում, նա
մի արծիւ է, որ ուղղակի արեգակին է նայում:
Բուսսօն ազնիւ, վսեմ աստղ է, որ վերից վար
է նայում. նա սիրում է մարդկանց վերից վար:

Վօլտերը խոնարհվում, յարգանք է մատու-
ցանում պապին հեգնօրէն և կամաւորապէս. կար-
գացէք նորա Մուհամէդի նուիրումը:

Բուսսօն չէր կարելի համոզել թագաւորին
ներկայանալու համար. նորա բնագղը ճիշդ կեր-

պով էր դեկավարում նորան: Նա ոգևորութիւն
էր ամբողջովին և որևէ զիջումներ անելու ըն-
դունակ չէր:

Յրանսիական հին գրողները որոշ հայեցա-
կէտ ունէին. լոյսը և ստուերները նրանց մօտ
միշտ կանոնաւոր են, հայեցակէտի օրէնքներով:
Նոր գրողները ցատկում են մի հայեցակէտից
միւսի վրա և նրանց նկարագիրների մէջ մենք
լոյսի և ստուերների խիստ անախորժ խառնուրդ
ենք գտնում, այստեղ պանթէիստական՝ հա-
մաստուածեան աշխարհահայեացքին պատկանող
մի միտք, այնտեղ նիւթապաշտութիւնից ծագող
մի միտք, անհաւատութիւնը՝ կասկածը և հաւա-
տը իրար հանդիպում և իրար հետ են ձուլվում...
խեղկատակի բաճկոն:

✓ Յրանսիական գրականութեան մէջ ներկա-
յումս կատարելապէս մշակուած գրական գողու-
թիւն է տիրում: Այստեղ մի խելք ձեռքը մի ու-
րիշի գրպանն է խոթում, և այդ հանգամանքը
նրանց մէջ որոշ կապեր է հաստատում: Մտքե-
րի գողութեան այդ տաղանդի գոյութեան ժա-
մանակ, երբ մէկը միւսից գողանում է միտքը
նախ քան այն միտքը կատարելապէս հասունա-
ցած է, մտաւոր աշխարհը ընդհանուրի բարիք,
սեպհականութիւն է դառնում... Գրականութեան

հանրապետութեան մէջ մտաւոր գոյքերի համայնութիւն է տիրում:

Ֆրանսիական նորագոյն գրականութիւնը նմանում է Պալէ բուսայեալի ճաշարաններին: Եթէ դուք մտած լինէիք խոհանոցը և տեսնէիք կերակուրների կազմիչ, բաղադրիչ մասերը և նրանց պատրաստութեան եղանակը, ձեր ախորժակը կկորցնէիք: Կեղտոտ խոհարարը հագնում է ձեռնոցները, երբ իւր եփած խորտիկները փայլուն սկաւառակների վրայ է դնում:

✓ Ներկայ ժամանակի ֆրանսիական գրողները նման են ճաշարաններին, ուր երկու ֆրանկով կարելի է ճաշել: Սկզբում բերում է կերակուրները ախորժակի են, բայց յետոյ գտնում ենք, որ նրանք երկրորդ և երրորդ ձեռքերից ստացուած նիւթերից են պատրաստուած և բացի այդ արդէն հին և փտած են:

Լէօն Գօզլանի *) մօտ չէ թէ տառն է սպանում, այլ ոգին:

Ֆրանսիական նոր բովանդակները քրիստոնէութեան սիրողներ (գիլետտաններ) են:

*) Լ. Գօզլանը (1803—1866) ֆրանսիական վիպասան է: Ծ. Թ.

նրանք վարվում են համակրութեամբ են վերաբերվում դէպի եկեղեցին՝ առանց նրա վարդապետութեան, խորհուրդներին հլու համախոհներ դառնալու. նրանք կաթոլիկ են:

Միթէ ճշմարիտ է, որ Ֆրանսիան կրկին քրիստոնէութեան դառնալ է ցանկանում: Միթէ Ֆրանսիան այնպէս վտանգաւոր կերպով հիւանդ է: Միթէ նա թոյլ կտայ իրան հէքիաթներ պատմելու... Միթէ նա իւր մահուան անկողնի մէջ զղջալ, դառնալ է ցանկանում: Յանկանում է հաղորդուել: Անգորութիւն, քո անունն է՝ մարդ:

Շատորբրիանը ցանկանում է քարոզել քրիստոնէութիւնը մաքառելու համար այն փառաւոր անհաւատութեան դէմ, որով ամբողջ աշխարհը տոգորուած է: Նա գտնվում է ճիշդ հակառակ դրութեան մէջ, որպէս նէապոլիտական կապուցիներ, որ մարդկանց առաջ պահում է խաչը: Ահա իսկական խեղկատակ:

Շատորբրիանը մի հոպլիտ՝ խեղկատակ է, որ իւր խենթի ցուպը պահում է մարդկանց առաջ: Ահա ճշմարիտ խաչը:

Շատորբրիանը՝ շատախօս զառանցող է, սկըզբունքով թագաւորական, ձգտումով, հակումով հանրապետական, ասպետ, որ իւրաքանչիւր շու-

շանի կուսութեան համար նիզակ է կոտորում և որ իւր գլխին կրում է Մամբրէնի սաղաւարտի փոխարէն կարմիր գլխարկ ճերմակ կօկարդով:

✓ Բիւֆֆօնը ասում է, որ ոճը ինքը մարդն է, Վիլմէնը այդ աքսիոմայի կենդանի հակասութիւնն, հերքումն է. նորա ոճը գեղեցիկ է, վայելչակազմ և մաքուր:

✓ Ով Շարլ Նօդիէի նման իւր երիտասարդութեան ժամանակ յաճախ գլխատման է ենթարկուել, այնպիսին, խիստ բնական է, ծերութեան ժամանակ բնաւ առանց գլխի կրփայ:

✓ Բլազ դը Բիւրին¹⁾ դիտում է աննշան, փոքր գրողներին խոշորացոյցով, իսկ մեծերին մանրացոյց ապակու միջով:

Ամօրին¹⁾—գրող կանանց հովանաւորողն է, նա օգնում է կարօտեալներին, նա նրանց փոքրիկ ճերմակ կրկնոցն (վերարկու) է, նրանց խոստովանա՜ւցը, նորա յօգուածները՝ փոքրիկ սրբատուն, խոստովանախուց է, ուր նրանք գաղտնի կերպով ներս են մտնում քօղով ծած-

¹⁾ Բլազ դը Բիւրին և Ամօրին ֆրանսիական յայտնի կրիտիկոսներ են:

կուած. մեռեալները անգամ խոստովանում են նրան իրենց մեղքերը. Եւան նորա առաջ այնպիսի բաներ է խոստովանում, որ օձը ասել է նորան և որ մեզ համար անյայտ է մնացել, որովհետեւ նա այդ բաները ծածկել է Ադամից: Նա քննադատ է ոչ թէ մեծ, այլ փոքր գրողների համար: Կէտերը (կէտ ձկները) նորա ոսպնակերպ ապակու տակ տեղ չունեն, սակայն դրա փոխարէն դուք այնտեղ կգտնէք շատ հետաքրքրական լուեր:

Միշել Գլփլիէն պահպանողական է և միաժամանակ ամենից առաջադիմական: Մի ձեռքով նա պահպանում է հին շէնքը, որ նա չըքանդուի մարդկանց գլխին, միւսով նա գծագրում է ապագայի նոր, աւելի ընդարձակ շէնքի յատակագիծը:

✓ Տիերրին կարելի կլինէր Մերլինի հետ համեմատել. նա պառկած է, որպէս կենդանի թաղուած, մարմինը այլևս գոյութիւն չունի, միայն ձայնն է մնացել... Պատմաբանը միշտ մի Մերլին է, նա թաղուած ժամանակի ձայնն է, նորան հարցնում են և նա պատասխան է տալիս. նա ետ նայող մարգարէն է:

Ֆրանսիական արուեստը իրականութեան

վերարտադրութիւնն է: Բայց որովհետեւ վերջին յիսուն տարիների ընթացքում Ֆրանսիացիք այնքան ապրեցին և այնքան շատ բան տեսան, ներանց գեղարուեստական երկերը ապրածի և տեսածի վերարտադրութեան շնորհիւ խիստ աւելի նշանաւոր են դառնում, քան գերմանացի արուեստագէտների գործերը, որոնք հոգեկան ցնորքների միջոցով միայն հասնում են իրանց պատկերացումներին:

Միայն ճարտարապետութեան մէջ, ուր բնութեան վերարտադրութիւնը տեղի ունենալ չէ կարող, Ֆրանսիացիք յետ են մնացել ուրիշներից:

Երաժշտութեան մէջ նրանք այն տոնն են տալիս, որ յատուկ է իրենց ազգայնութեան. առողջ միտք և զգայունութիւն, խելք ու շնորհալիութիւն. դրամայի մէջ՝ կրքեր: Ընտրականութիւնը երաժշտութեան մէջ Մէյերբերն է ներմուծել:

Մէյերբերը արխտոկրատիայի երաժշտական զուարճութեանց ուսուցիչն է:

Մէյերբերը բոլորովին հրէայ է դարձել: Եթէ նա ցանկանում է Բերլինում իւր նախկին յարաբերութիւնների մէջ մտնել, պէտք է ամենից առաջ մկրտուի:

Րոսսիայի «Օթէլլոն» իրենից լուսաճաճանչ ծաղիկներ արձակող Վեգուլն է:

Պիզարոի կարապը չկարողացաւ այլևս տանել սագերի կռկոցը:

Երբ արուեստագէտի մէջ դադարում է բանաստեղծութիւնը, պօէզիան, նրա գլխից չքանում է պսակը:

Նորա Պաստիշչիօն ինձ վրա միշտ անախորժ ներգործութիւն է անում, սպանիական գալլերէայում գտնուող Հերոնիմոսի պատկերը յիշեցնելով, որ արդէն դիակ դարձած, սաղմոսներ է գրում: Այստեղ ցուրտը անցնում է մարմնով, որպէս մի արձանի հպելու, ձեռք տալու ժամանակ:

✓ — Աւի Շեֆֆերի բոլոր պատկերները ցոյց են տալիս հեղինակի այս աշխարհից ազատուելու տենչը, ձգտումը սակայն առանց կատարելապէս անդրգերեզմանական աշխարհի գոյութեան հաւատալու:

✓ — Լեսսինգը ասում է. «Եթէ կտրէին Րաֆայէլի ձեռքերը, նա, այնուամենայնիւ, նկարիչ կը դառնար»: Նոյնը ճիշտ կերպով մենք կարող ենք ասել. եթէ պ. ***-ի գլուխը կտրեն, նա այնուամենայնիւ նկարիչ կմնար, նա կշարունակէր նկարել առանց գլխի, և ոչ ոք չէր նկատիլ, որ նա անգլուխ է:

Շէքսպիրը ստացել, փոխ է առել ղրամատիքական ձևը իւր ժամանակակիցներինց. այդ ձևի տարբերութիւնը Փրանսիականից:

Իւր ղրամաների բովանդակութիւնը, նիւթը նա միշտ փոխ է առել, քաղել է մինչև մանր, աննշան մանրամասնութիւններն անգամ. կոպիտ ուրուագծերը իսկ, որպէս քանդակագործի առաջին քանդակումները, նա պահել է: Արդեօք մըտաւոր արտադրութեան մէջ ևս օգտաւէտ չէ աշխատանքի բաժանումը: Կատարելութեան բարձրագոյն աստիճանին միայն ղրանով՝ աշխատանքի բաժանումով են հասնում:

✓ Որպէս Հոմերոսը միայնակ չի ստեղծել իւր «Նդիական»ը, նոյնպէս և Շէքսպիրը մենակ չի գրել իւր ողբերգութիւնները. նա նախնական աշխատանքները կենդանացնող հոգին է տուել միայն:

Գեթթէի մօտ մենք նոյնն ենք տեսնում— նորա փոխառումները, գողութիւնները:

Իւնիուսը ազատութեան ասպետն է, որ կռոււմ է ծածկած, վայր ձգած սաղաւարտի երեսնոցով:

✓ Դանտէն բանաստեղծութեան հրապարակական մեղադրողն, դատախազն է:

ՄԵԾ ՄԱՐԴԻԿ

Ինչպէս աստղերը զարդարում են երկինքը, այնպէս մեծ մարդիկ զարդարում են իրանց հայրենիքը և աշխարհը: Մեծ մարդկանց սրտերը աշխարհի աստղերն են: Եթէ վերևից նայելու լինենք մեր մոլորակի վրայ, այդ սրտերը նկատելի կլինեն, ինչպէս լուսաճաճանչ, փայլուն լուսատուներ: Փրանսիան—մարդկային սրտերի յարդագողի ճանապարհին է:

✓ Մեծ հանճարը կազմւում է, առաջ է գալիս ուրիշ հանճարից, ոչ այնքան նմանութեան՝ աստիճանից, որքան միջոցով, որքան շփման:

✓ Միայն հանճարը ունի նոր մտքի համար և նոր խօսք:

—Հանճարի գրիչը միշտ աւելի մեծ է քան նա ինքը. նա միշտ աւելի մեծ է նրա ժամանակաւոր ղիտաւորութիւններից:

✓ —Թղուկը, որ կանգնած է հսկայի սուսերի վրա, տեսնում է աւելի քան նա, բայց բարձրագոյն, վսեմ հայեցողութեան համար նրան պակասում է հսկայի սիրտ:

—Դուք բոլորդ, որ ազգային հերոսների յետնորդներ էք ձեզ ձեռնարկում ու հրատարա-

կուս, միայն նրանց քայքայուող դիակից դուրս եկած որդեր էք:

— Մեծ հերոսի անձնական ծանօթները՝ նրա լակէյները, քարտուղարները և աղբւգանտները, իսկ երբեմն և նորա ժամանակակիցները առ հասարակ ամենից քիչ կարող են գրել նրա պատմութիւնը: Նրանք ինձ յիշեցնում են փոքրիկ միջատներին, որոնք սողում են մարդու գլխի վրա, այնքան մօտ նրա մտքերին, բայց որոնք ոչ մի հասկացողութիւն չունեն նրա կեանքի իմաստի և էութեան մասին:

✓ — Մեծ մարդը կարող է երբեմն մեծ նպատակներին հասնելու համար գործել իր համոզմունքներին հակառակ և երկդիմի կերպով գտնուել կուսակցութիւնների միջև. նա ով բարձր է գտնուում, պէտք է նոյնպէս հնազանդուի հանգամանքներին, որպէս աշտարակի վրայի հողմացոյցը՝ ֆլիւգեր, թէև նա երկաթից է շինուած, բայց ամեն մի մրրիկ կարող է ջարդել և վայր ձգել նորան, եթէ նա չսովորի քամու գէմ պատելու ագնիւ արուեստը: Բայց երբէք մեծ մարդը չի կարող այնչափ դաւաճանել իր հոգուն իր հայրենակիցների դժբաղդութեանը անտարբերութեամբ վերաբերուելու կամ այն դեռ աւելացնելու մտքով: Ինչպէս մենք սիրում ենք մեր մօրը, այնպէս սիրում ենք այն հողը, որի վրա ծնուել ենք. ծաղիկները, նրանց բուր-

մունքը, լեզուն և մարդկանց, որոնք աճել են նրա վրա: Ոչ մի կրօն այնքան վատ չէ և ոչ մի քաղաքագիտութիւն՝ պոլիտիկա, այնքան լաւ չէ այդ սէրը խեղդել կարենալու համար:

— Երբ մենք հեռուից լսում ենք մի քաղաքի մասին, ուր ապրում է որևէ մեծ մարդ, մենք ակամայից պատկերացնում ենք մեզ այն, որպէս քաղաքի կենտրոն. քաղաքի կտուրները, թւում է մեզ, լուսաւորուած են նրա փառքով: Իսկ քաղաք գալով, մենք այնքան էլ շուտ չենք գտնում նրան. այսպէս ճամբորդը արդէն հեռուից տեսնում է բարձր տաճարը, բայց, քաղաք գալով, նա ծածկւում է, թագչում է նրանից նեղ՝ ծուռումուռ փողոցներով:

ԶԱՆԱԶԱՆ ՄՏՔԵՐ

✓ Մ. մոռանութիւնը ծով է, որի համար կողմնացոյց՝ կոմպաս դեռ չէ հնարուած:

✓ — Մեր կարծիքը իրերի, առարկաների ու երևոյթների մասին պէտք է անյողդողդ ու հաստատուն լինի, իսկ մարդկանց մասին ամեն օր կարող է փոխուել:

✓ — Եթէ խօսքը կենդանի է. նրան կարող են կրել թզուկները, եթէ նա մեռած է, նա չի կանգնիլ թէկուզ հսկաները նրան պահպանէին, նեցուկ լինէին:

✓ — Լաւագոյն գրքերի, բանաստեղծութիւնների, շէնքերի և այլն հեղինակները մեզ յայտնի չեն: Ինչպէս էին կոչում Կեօնի տաճարը նախագծող, յղացող ճարտարապետին: Ո՞վ է նկարել նրա մէջ Աստուածամօր պատկերը բեմի ճակատին: Ո՞վ է գրել Յոբի գիրքը: Մարդիկ մոռանում են ազնիւների և մեծերի անունները: Ժողովուրդը լաւ յիշում է միայն իր ճնշողներին:

✓ — Ով Աստուած, եթէ ինձ վիճակուած է մեռնել, ապա տո՛ւր ինձ Օլօֆերնի*) մահը:

*) Օլօֆերնը Ասորւոց զօրավար էր, որին սպանեց Յուդիթը նրա քնած ժամանակ:

✓ — Եթէ իշխանը Բեմի քարից մատանի է կրում, այն ազամանդի տեղ կընդունեն, իսկ աղքատը ազամանդեայ մատանի դնի, այն հասարակ ապակու տեղ կընդունեն:

✓ — Ով պառկում է շների հետ, վեր է կենում լուերի հետ:

✓ — Գիլիօտինը մեքենայ է, որով անջատում են վատ սրտերը յիմար գլուխներից:

✓ — Միտքը անտեսանելի տարածութիւն է, իսկ տարածութիւնը-տեսանելի միտք:

✓ — Սատանան, բարձր տոհմերը և ճիգուիթները գոյութիւն ունեն միայն այն ժամանակ, երբ նրանց հաւատում են:

✓ — Երկնքի և երկրի միջև կան բաներ, որոնց հասկանալ չեն կարող ոչ միայն մեր փիլիսոփաները, այլ և բուն սովորական յիմարները:

✓ — Այն օրից, երբ գօտկի վերայ դաշոյն կըլը մօղայից դուրս է եկել, անհրաժեշտ է գլխում երգիծանք՝ հումօր ունենալ:

✓ — Հեղինակի պատկերը, լուսանկարը գրքի առաջը յիշեցնում է ինձ Գենուան (Ճենովան), ուր խելագարների տան՝ գժանոցի առաջ նրա հիմնադրի արձանն է կանգնած:

✓ — Մահմէդը արգելել է տաճիկներին գինին, որ նա այսպիսով աւելի անոյշ թուայ նրանց:

✓ — Մենք որոնում էինք մարմնաւոր Հնդկաստանը և գտանք Ամերիկան: Այժմ մենք փրն-

տռում ենք հոգևոր Հնդկաստանը, ի՞նչ կգրտենք:

— Յիմարները կարծում են, որ պէտք է յարձակուել սագերի վրա Կապիտոլիոնը նուաճելու համար:

— Կելտերը սովորութիւն ունէին փող պարտք տալ միւս աշխարհում ետ ստանալու պայմանով:

— Արուեստը և փիլիսոփայութիւնը, պատկերը և գաղափարները, յոյներն են անջատել: Առաջ նրանք միացած էին կրօնի մէջ:

✓ — Աղքատ հովիւը կարծում է, որ եթէ նա հարուստ լինէր, տաւարը կարածէր ձիու վրա նստած:

✓ — Շատերը կարծում են, որ լաւ են ճանաչում թռչունը, եթէ տեսել են ձուն, որից նա գուրս է եկել:

Աւետարանի յաղթանակը մեծ հրաշք էր: Անդէն մարդկանց մի փոքրիկ խումբ ներս գրոհեց հռովմէական մեծ աշխարհը և մի խօսքով յաղթեց: Բայց ի՞նչ խօսք էր այդ: Ամբողջ հեթանոսական աշխարհը այդ օտար մարդկանց և կանանց խօսքի առաջ դողաց, սարսեց և տապալուեց, մարդկանց, որոնք այդ հին մոլորակի վրա ոչնչից չէին վախենում ոչ վայրի գազաններից, ոչ վայրենի մարդկանցից, ոչ սրից, ոչ հրից: Քրիստոնէութեան առաջ գալը, նրա մա-

քառումը և յաղթանակը — այդ համաշխարհային պատմութեան փառաւոր երևոյթն է:

Հռովմայեցին միաժամանակ զինւոր էր և փաստաբան. ուրիշի կայքը, որ նա նուաճում էր սրով, հաստատում էր իր վրա մանուածապատ օրէնքներով՝ կազուխստիկայով: Հռովմէական քաղաքացիական իրաւունքի օրէնսգիրքը, կօդեկսը սատանայի սուրբ գիրքն է:

— Անկանոն բայերը տարբերում են կանոնաւոր բայերից նրանով, որ առաջինների համար աւելի խիստ են ծէծում, զանակոծում:

— Հռովմայեցիք աշխարհը նուաճելու համար ազատ ժամանակ չէին ունենալ, եթէ ստիպուած լինէին սովորել լատինական լեզուն: Բայց այդ քաղաւորները օրօրոցի մէջ արդէն գիտէին, ինչ բռներ հայցական հոլովում վերջանում im-ով:

ՀԱՅՆԷՆ ԻՐ ՄԱՍԻՆ

Ես չգիտեմ, լաւ կամ վատ է այն, ինչ որ ես ստեղծել եմ իմ ամբողջ կեանքի ընթացքում: Բայց ես գիտեմ, որ այդ մեծ է եղել, ես զգում եմ այդ իմ հոգու հիւանդոտ լայնացումից, որից զուրս են եկել այդ ստեղծագործութիւնները:

✓ Ես չգիտեմ, արդեօք արժանի կհամարուեմ, որ իմ դադարը զարգարեն դափնեայ պսակով: Բանաստեղծութիւնը, որքան էլ ես այն սիրում լինէի — միշտ եղել է ինձ համար սրբազան խաղալիք միայն: Ես երբէք առանձնապէս բարձրը չեմ գնահատել բանաստեղծի փառքը: Բայց իմ ղազաղի վրա սուր դրէք. ես քաջ զինուոր եմ եղել մարդկութեան ազատագրական պայքարի մէջ:

Երբ ես երիտասարդ ժամանակս ողորմութիւն էի տալիս մուրացկանին, ես միշտ աւելացնում էի. «սիրելիս, երբ դու կնուիրես քեզ գրականութեան և քննադատականներ կը գրես Բրօկհաուզի գրական թերթերի համար, խնդրեմ ինձ չհայհոյես»:

— Ես չեմ պատկանում նիւթապաշտներին՝ մատերիալիստներին, որոնք մարմնացնում են ոգին. ես աւելի շուտ վերագարձնում եմ մարմիններին նրանց ոգին, ես նրանց ոգի եմ տալիս, ես նրանց նուիրագործում եմ: Ես չեմ պատկանում անաստուածներին, որոնք բացասում են: Ես հոստատում պնդում եմ:

— Այս աշխարհում ամեն ոք աւելորդ է բացի արեգակից և ինձնից: Առանց մեզ երկուսի. ես չեմ կարող պատկերացնել ինձ ոչ գարուն, ոչ գարնանային օդ, ոչ գերմանական գրականութիւն, ոչ էլ գործաւոր աղջիկներին: Առանց մեզ ամբողջ աշխարհը կփոխուէր մի ահագին ոչնչի, զրօյի ստուերի, լուի քնի, Կարլ Շտրեկֆուսի ոտանաւորի:

ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

Աստուածաշունչը—այդ հին, լաւ գիրք է, համեստ, որպէս բնութիւնը և որպէս բնութիւնը, բնական, նա լի օրուան պէս է երևում և առանց յաւակնութեան, որպէս արեգակը, որ մեզ տաքացնում է, որպէս հացը, որ մեզ կերակրում է: Նա նայում է մեզ վրա այնպէս քնքուշօրէն, կարծես օրհնելիս լինի մեզ, որպէս պառաւ տատը: Ով կորցրել է իր Աստուծուն, նա այս գրքի մէջ կարող է նորից գտնել Նորան. ով երբէք չէ ճանաչել Նորան, նորա վրա այս գրքից աստուածութեան շունչը կփչի: Հրէաները, որոնք թանկագին իրերը այնպէս լաւ ճանաչում են, գիտէին, ինչ են անում, երբ երկրորդ տաճարի հրդեհից միայն այդ գիրքը ազատեցին:

Աստուածաշունչը—մի գիրք է, որ մեծ է որպէս աշխարհ, որ արմատներ ունի ձգած աշխարհի ստեղծագործութեան անդունդի մէջ և որ բարձրանում է մինչև կապուտակ գաղտնիքները, արևի ելքն ու արևի մուտքն է, ուխտն ու կատարումն է, կեանքն ու մահն է, մարդկութեան ամբողջ դրաման գրքերի այդ գրքի

մէջնէ: Հրէաները իսկապէս գրքի ժողովուրդ են. գիրքը նրանց հայրենիքն, նրանց իշխանն է, նրանց երջանկութիւնը ու վիշտն է: Նրանք այդ գրքի մէջ են ապրում, այստեղ նրանք ուժեղ են և հիացմունքի արժանի: Այդ գրքի ընթերցանութեան մէջ խորասուզուած, նրանք չնկատեցին ոչինչ, ինչ որ աշխարհիս վրա տեղի ունեցաւ. ազգերը բարձրանում էին ու կորչում, պետութիւնները աճում էին ու հանգչում. յեղափոխութիւններ էին անցնում աշխարհիս վրա, իսկ նրանք նստած էին՝ գիրք կարդալիս և չէին զգում ժամանակը, որ սլանում էր նրանց գլխի վրա:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նախնական մեղքի պատմութեան մէջ, օձը, այդ փոքրիկ պրիվատ-դօցէնտը, արդէն 6000 տարի Հեգելից առաջ քարոզում էր Հեգելեան ամբողջ փիլիսոփայութիւնը: Այդ անոտ կապոյտ գուլպան (չուլիկի), շատ սրամիտ կերպով ապացուցանում է, որ բացարձակը պարունակվում է կեանքի լինելութեան, և գիտութեան նոյնութեան մէջ, որ մարդ գիտութեան միջոցով Աստուած է դառնում կամ որ Աստուած ինքնաձանաչութեան է գալիս մարդու մէջ:

Սպանուած չրէաստանը կտակելով Հոովմին իր հոգեպաշտութիւնը՝ սպիրիտուալիզմը, թշնամի յաղթողից վրէժը հանեց: Հոովմը, ազգերի Հերկուլէսը, թունաւորուեց հրէական թոյնով. նրա սաղաւարտը և զրահը վայր ընկան քայքայուող անդամների վրայից և նրա ռազմական հրամայողական ձայնը այլասեռուեց...

Անգլիացի Կարլոս թագաւորի սպանումը մեզ աւելի է ցնցում քան Լուդովիկոս XVI ըսպանումը: Կարլոսը հաւատում էր իր թագին իր բացարձակ, արքայիւտ իրաւունքին. նա մե-

ռաւ նրա համար որպէս ասպետ, հպարտութեամբ և համարձակօրէն: Իսկ խեղճ բուրբօնը առաջուց փոխեց իր թագը յակօրեանների դրդակի, նա ինքը իրան չէր հաւատում: Մեր արցունքը Լուի Կապետին, դափնիները-Ստիւարտին:

Փրեզերիկոս Մեծ մեծ ծառայութիւններ է մատուցել գերմանական զրականութեան. ի միջի այլոց այն, որ նա իր բանաստեղծութիւնները հրատարակել է Ֆրանսերէն լեզուով:

—Ֆրիդրիխ Վայդ պսակուած, թագակիր նիւթապաշտութիւն է, մատերիալիզմը:

Վ—Րոբեսպիերը—Ժան Ժակ Բուսսօի ձեռքն, արիւնոտ ձեռքն է, որ դուրս է հանել ժամանակի ծոցից այն մարմինը, որի հոգին ստեղծել է Բուսսօն:

Աթենացիք — մարդկութեան ուսանողութիւնն են: Աթենացիների սահմանադրութիւնը՝ ճեմարանական, ակադեմիական ազատութիւնն է:

—Տասնհուրդար է ինչ պայքար է մղվում Երուսաղէմի և Աթէնքի միջև, սուրբ գերեզմանի և արուեստի սուրբ օրրանի միջև, ոգու կեանքի և կեանքի ոգու միջև:

Խեղճ Րոբէսպիէր, դու կամենում էիր հան-

ըրապետական խստութիւն մտցնել Պարիզում, այն քաղաքում, ուր 15000 մոգիստուհիներ և 15000 հոտաւէտ նիւթեր վաճառողներ կան, որոնք զբաղուած են իրանց ժպտող, կոկոզ և անոյշ հոտ տարածող արհեստով:

—Առաջին կայսրութիւնը չէզոք հող էր ամենից տարբեր, բազմազան համոզմունքների տէր մարդկանց համար. նա կամուրջ էր այն մարդկանց համար, որոնք ազատուեցին նրա վրա յեղափոխութեան հեղեղից և քսան տարի դէս դէն էին ընկնում նրա վրա, չվճռելով, ձախ ափը գնալ թէ աջ:

—Կայսրը՝ Նապոլէօն I, մեռած է: Ատլանտեան ովկիանոսի մերկ, անապատային կղզու վրա է նրա մենաւոր գերեզմանը, և նա, որի համար նեղ և անձուկ էր այս աշխարհը, պառկած է փոքրիկ բլրակի տակ, որի վրա հինգ լալկան ութենիներ խորին թախծի մէջ կախել են իրանց տերէները: Նրա տապանաքարի վրա գիր չկայ, բայց Կլիօն, պատմութեան դիցուհին, դրոշմել է նրա վրա անտեսանելի բառեր, որոնք հազար տարիների միջից կհնչեն, որպէս ոգիների խմբերգեր:

—Նշանակելի է, որ Կայսրի երեք ամենախոշոր հակառակորդներին սարսափելի ճակատագիր է բաժին ընկել: Լօնդօնդերրին մորթել է իրան, Լուդովիկոս XVIII փտեց իր գահի վրա,

իսկ պրօֆէսոր Զաւլֆէլը դեռ ևս պրօֆեսսոր է Գեօտտինգենում:

—Նապոլէօն—այդ թովիչ, դիւթական խօսք է, որ էլէկտրականացնում է և խլացնում Փրանսիացիներին: Հազարաւոր թնդանօթներ նիրհում են այդ խօսքի մէջ, ինչպէս Վանդօմի սիւնի՝ կօլօննայի մէջ:

Նապոլէօնը հասկանում էր միայն անցեալը: Ապագայի համար նա ոչ ականջներ, ոչ էլ աչքեր ունէր:

Նրանք հայհոյում են Նապոլէօնին, բայց յայտնի, առանձին ականածութեամբ աջ ձեռքով նրա վրա ցեխ շալտելով, ձախում պատաւոր կերպով պահում են զխարկը:

✓ Քանի մարդիկ աւելի մօտ էին կանգնած Նապոլէօնին, այնքան առաւել ևս հիանում էին նրա վրա. ուրիշ հերոսների հետ հակառակն է լինում: Նապոլէօնը այն ծառից չէ, որից շինում են թագաւորներին. նա այն մարմարիոնից է, որից շինում, կերտում են աստուածներին:

✓ Գերմանական իշխանները երկարակեաց են այն պատճառով, որ վախենում են մեռնել Նապոլէօնին միւս աշխարհում չհանդիպելու համար: Գուցէ հազարաւոր տարիներից յետոյ կը յայտնուի մի սրամիտ գիտնական, որ խիստ շա-

հեկան և հիմնաւոր շարադրութեան, դիսսերտացիայի մէջ կապացուցի, որ Նապոլէօն Բոնապարտը այս նոյն Պրոմէթէոսն է, որ աստուածներից կրակ, լոյս է գողացել և այդ յանցանքի համար դաժուել է ծովի մէջ մենաւոր ժայռին և նրա սիրտը կրծող անգղին զոհ է տրուած եղել:

Անգլիացիք միայն սպանեցին Նապոլէօնին: Վալտեր Սկոտտը վաճառեց նորան:

Վանդալի սիւնի վրա կանգնած է նա, Նապոլէօնը, երկաթի մարդը. այստեղ, ինչպէս և կեանքի մէջ, յենուելով իր թնդանօթային փառքի վրա և սարսափելի մենութեան մէջ սլանալով ամպերի մէջ, այնպէս որ ամենից փառամոլ զինւորի սիրտը կբուժուի և կզսպուի իր սին ձգտման մէջ դէպի փառքը, երբ նա դէպի վեր կնայի նրա՝ անհասանելու վրա: Այսպէս այս հսկայական մետաղեայ սիւնը Ներոպայի համար հանդիսանում է որպէս շանթարգել խիզախող, դիմազրաւող հերոսութեան դէմ:

Լուի Ֆիլիպպը այն կարծիքն ունի, որ նա հնարել է «մեղհանական թագաւորութիւնը»: Նա արտօնագիր՝ պատենտ ստացաւ այդ հնարագիտութեան համար: Այդ պատենտը տարեկան 18 միլլիոն փող է բերում նրան և նա ցանկանում

է այդ պատենտը պահպանել իւր զաւակների և յաջորդների համար:

— Փետրուարի (1848 թ.) անմիտ օրերի դէպքերը, անցքերը անլուր և առասպելական են: Ամենախելացի մարդկանց իմաստութիւնը ծաղրի և նախատինքի ենթարկուեց և թեթեամտութեան ընտրեալները բարձրացուեցին վահանների վրա: Վերջինները դարձան առաջին, ստորնագոյնները բարձրագոյն. իրերը և մտքերը տակնուվրա արուեցին*):

Մեր ժամանակը այնքան էլ աղքատ չէ, ինչպէս կարծում են: Շատ մարտիկներ ունենք, որոնք ծածուկ պայքարում են, կռոււմ և մեռնում...

Փիլիսոփայութիւն

— Եթէ կանտը գերմանական փիլիսոփայութեան տերրորի կօնվնտն է իսկ Ֆիլսոֆն Նապոլէօնեան կայսրութիւնը, Շելլինգը վերահաս-

*) Միթէ նոյնը չէր մեղ մօտ հոկտեմբերեան տխուր օրերին, ամբողջ Ռուսաստանում, երբ ինքնակոչ յեղափոխականները հազար ու մի օրգիաներ սարքեցին ու բազմաթիւ աղէտներ բերին ժողովրդի գլխին: Բայց ուսահայոց հայդուկային իրականութիւնը, որ բազմաթիւ սինքորներին, երկչոտ գեաղանների «ըմբոստ» դարձրեց և այդ «ըմբոստները» այժմ կամ ծակերումն են կամ ծակեր են փնտռում թագնուելու համար: Ողորմելի հացկատակներ: Մ. Թ.

տատող ընկերացիներն էին։ Նա վերադարձրեց ընտանիքին իր օրինական, լեգիտիմ իրաւունքները։

Փիլիսոփայական գերմանական փիլիսոփայութեան համար այն է, ինչ որ Նապոլէօնը Ֆրանսիական յեղափոխութեան մէջ։ Կանտականների տերրորից յետոյ նա երևան է գալիս, ինչպէս Նապոլէօնը կարմիր տերրորից յետոյ։

— Փիլիսոփայութեան մէջ պլագիատ՝ բանադրութիւն գոյութիւն չունի։

Նապոլէօն II մէջ սպասում էին գտնել թէ՛ կուզ փոքրիկ Նապոլէօն I-ին։ Փոքրիկ Նապոլէօնին։ Կարծես թէ Վանդօմի սիւնը կարող է փոքրիկ լինել։ Հէնց նրա համար, որ նա մեծ է, ժողովուրդը նրան էլ յենում է այս տատանող երեքուն ժամանակում, երբ Վանդօմի սիւնը միայն հաստատուն կերպով է կանգնած Ֆրանսիայում։

Գիշօն ղիմադրութեան մարդ է, բայց ոչ ընկերացի։

Բուրժուազիան չէ սիրում Գիշօնին։ Միշտ աւելի նրան են սիրում, ով մեզ խոստանում է օտարի կայքերը, քան նրան, ով պահպանում է մեր սեպհականը։ Այսպէս է եղել Աթէնքում, այսպէս է Պարիզում, և այսպէս կլինի բոլոր բամկավարական, դեմօկրատիական երկրներում, ուր խօսքը ազատ է և մարդիկ թեթեամիտ։

— Լաֆայետը Բոբեսպիերից յետոյ Ֆրանսիական յեղափոխութեան մէջ ամենից մաքուր անձնաւորութիւնն է և Նապոլէօնից յետոյ նրա ամենից ժողովրդական հերոսը։

— Տիերը ամենից խոր անտարբեր է, ինչիֆֆերենտիստն է։ Նա քաղաքականութեան Գեթթէն է։

— Լուի Բլանը շատ փոքրիկ զլուխ ունէր։ Դիտելով այն, ես ոչ մի կերպով չկարողացայ հասկանալ, ինչպէս այսպիսի փոքրիկ զլխի մէջ կարող էր տեղաւերդել այսչափ շատ անդիտութիւն։

— Լուի Բլանը փոքրիկ զլխով մարդ է, բայց հայեացքով խորապէս թափանցում է անդունդների մէջ, ուր թաղնուած սպասում են մեծ սոցիալական հարցերը։ Նա մեծ ապագայ ունի, որովհետեւ հասկանում է անցեալը։

— Լուի Բլանը կէս սպարտացի է, կէս լիպուտ։

Լօրդ Գրէյն և Կազիմիր Պերիէն իրար պահպանում են միմեկատրութեանց զլխին ձգողութեան փոխադարձ սյօով. այսպէս երկու հարբածներ չեն ընկնում։

Կ Ի Ն Ը

Դուք յիշում էք Եւայի պատմութիւնը: Հէնց որ կինը գիտակցութեան է գալիս, նրա առաջին միտքը լինում է նոր հագուստ:

— Երաժշտութիւնը հարսանիքի ժամանակ— այդ արշաւանք գնացող զինուորներին ուղեկցող, ճանապարհ գնող երաժշտութիւնն է:

Ո՞վ կանայք, նրանց պէտք է շատ բան ներել, որովհետեւ նրանք շատ են սիրում և անգամ շատերին: Նրանց ատելութիւնը նոյն սէրն է միայն ուղղութիւնը փոխած: Նրանք այն ժամանակ են միայն չարիք պատճառում, երբ զբրանով սիրոյ ծառայութիւն են մատուցանում ուրիշ տղամարդի: Երբ նրանք զրուս են, նրանց մի աչքը նայում է թղթին, միւսը տղամարդին: Գէշ կանայք չկան *):

Ո՞վ կանայք. դուք ստեղծուած էք մեզ ցաւ պատճառելու: Ձեր հայեացքը թոյն է, ձեր շնչառութիւնը— խաբեբայութիւն. ճի՛ պատշիւնը

*) Որքան կուգէք գէշ կանայք մեզանում՝ ոռւս և հայկական կեանքի մէջ, գէշ, այլանդակ հոգիներով, փշացած փողոցային մտքերով ազատամտութեան քողով ծածկուած: Մ. Թ.

ճաշակեց մեղքի խնձորը: Մագերը Հոովմը ազատեցին, իսկ դուք կործանեցիք Տրովադան: Ո՞վ Տրովադա, Պրիամոսի սրբազան բերդ: Ո՞վ Մարկոսի, Անտոնիոսի կորստեան պատճառ եղաւ: Ո՞վ սպանեց Կիկերոնին: Ո՞վ էր պահանջում Յովհաննէս Մկրտչի գլուխը: Ո՞վ էր պատճառը Աբելիարի խեղանդամութեան: Կանայք, մենք ձեզ տալիս ենք լաւագոյն, վսեմագոյն բաները, տալիս ենք մեր սրտի սրբազան բոցը, մեր սէրը, իսկ դուք մեզ ի՞նչ էք տալիս, միս, եզան վատ միս, հորթի հոտած միս և ջրալի սոււս:

Կանայք մեզ երջանիկ դարձնելու միայն մի միջոց ունեն, իսկ դժբաղդ դարձնելու 30,000 միջոց:

— Կանայք չունեն երկրորդ սէր: Նրանց հոգիները շատ թոյլ են սիրոյ սարսափելի երկրաշարժը երկու անգամ վերապրելու համար:

— Ուր վերջանում է կինը— սկսում է վատ տղամարդը:

— Նշանակելի է, որ ամենից գեղեցիկ աղջիկները ամենից դժուար են ամուսին ձարուծ: Հին ժամանակներից այդ արդէն այսպէս է եղել: Ինչպէս յայտնի է, բոլոր երեք զրացիաները աղջիկ, կոյս մնացին:

ՄՍՐԴ ԵՒ ՆՐԱ ՆՈՒՆ

Եթէ մարդ ուզում է անձնասպան լինել, նա միշտ բաւական պատճառներ ունի դորա համար: Բայց նա ինքը գիտէ՝ արդեօք այդ պատճառները—այդ ուրիշ հարց է: Մինչև մեր կեանքի վերջին րոպէն մենք մեզ հետ կօմեղիա ենք խաղում: Սրտի ցաւից մեռնելով, մենք գանգատւում ենք ատամի ցաւի վրա:

Յիմարներ շատ կան աշխարհիս վերայ, և երբեմն նրանց այն պատիւն են տնում, որ նրանց խելագարներ են համարում, բայց բուն խելագարութիւնը այնպէս հազադիւտ է, ինչպէս և ըուն, իսկական իմաստութիւնը. գուցէ հէնց նա է իսկական իմաստութիւնը, որ նեղացած այն մասին, որ նա ամեն բան գիտէ, այս աշխարհի բոլոր այլանդակութիւնները, խելացի որոշում է արել ցնդուելու, գժուելու: Արևելեան ազգերը իմաստուն են, նրանք խելագարին պատում են ինչպէս մարգարէի, իսկ մենք մարգարէներին խելագարներ ենք համարում:

—Մարդիկ առանց սրտի յիմար են: Որով-

հետև մտքերը չէ թէ գլխից են բղխում, այլ սրտից:

—Նրանք են աւելի շատ վախենում վառողից, որոնք չեն հնարել այն:

—Սրախօսութիւններին և պարտատէրերին աւելի ձեռնտու է յանկարծ երևալ, չնախազգուշացնելով իրանց մասին:

—Ամենախորին ճշմարտութիւնը բղխում է միայն ամենախորին սիրուց:

—Ո՛վ աստուածներ, ես չեմ խնդրում ձեզ թողնել ինձ երկտասարգութիւնը, բայց թողէ՛ք ինձ նրա առաքինութիւնները. անշահ և անկեղծ ցատումը, անշահ և անկեղծ արցունքը:

—Ի՞նչ է ցանկանում երկտասարգը. ի՞նչ է նշանակում այդ հրաշալի յուզումը. նորա հոգու մէջ. նա ցանկանում է պատմութիւն ունենալ: Նա ուզում է որ և է բան վերապրած մարդ լինել:

—Սէրը—այդ ոգևորութիւն է, ոգևորութիւն, որ միշտ աստուածային է, իմաստուն թէ անմիտ բան է նա ստեղծում, շինում:

—Վիրաւորողը երբէք չի ներել: Վիրաւորումը միայն կարող է ներել:

—Մարդիկ ականաւոր են դառնում միայն կրքի արտայայտութեամբ: Բաւական է մի գարծ, մի խօսք, բայց նրանք կը բռնու պէտք է լինեն:

—Աղամանդները կարող են պարծենալ նրանով, որ բանաստեղծները համեմատում են նրանց հետ մարդկային սիրտը:

—Հիմալայից, բուրգերից, անտառներից և ամպերից բարձր է մարդկային սիրտը. նա արևից աւելի գեղեցիկ է, աստղերից աւելի լուսավառ, նա աւելի անսահման է քան սէրը. անսահման է որպէս Աստուած. նա աստուածութիւն է:

—Ով չի գնում այնքան հեռու, որքան հեռու մղում է նորան սիրտը և որքան հեռութիւն է տալիս նրան բանականութիւնը, նա երկչոտ է: Ով աւելի հեռու է գնում, քան ցանկանում էր, նա ստրուկ է:

—Առաքինի իւրաքանչիւրը կարող է լինել միայնակ: Արատի համար երկուսն են պէտք:

—Բարոյականութիւնը սրտի բանականութիւնն է:

—Վայելքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վերին աստիճանի ախորժելի ցաւ:

—Միայն մեզ մերձաւոր հարազատ վիշտն է կորցում մեր արցունքը. իւրաքանչիւրը իսկապէս միշտ լաց է լինում միայն իւր մասին:

—Առաքինութիւնը որքան էլ բարձր է պահում իւր գլուխը երկնքում, սակայն, այնուամենայնիւ, նա միտն է պահում ասեղի ամեն մի, թէկուզ ամենաթոյլ, չնչին ծակոց, երբ և իցէ նրան հասցրած:

—Առանց դրական բովանդակութեան աշխարհում չի կարելի ոչ համակրական ոչ էլ հակակրական, թշնամական յոյզեր առաջ բերել: Կրակ է հարկաւոր մարդկանց վառելու համար որպէս թշնամութեան, նոյնպէս և սիրոյ համար:

Իսկապէս մենք ամենքս ապրում ենք հոգևոր մենութեան մէջ: Կրթութեան առանձին մեթոդը կամ զրբերի պատահական, յատուկ ընտրութիւնը տուել է մեզնից իւրաքանչիւրին բնաւորութեան առանձին ուղղութիւն: Իւրաքանչիւրը մեզնից, հոգևորապէս դիմակաւորուած, մտածում է, զգում է և ձգտում է այլապէս քան ուրիշները, և այնքան շատ թիւրիմացութիւններ կան, որ ամենից մեծ ապարանքներում անհնարին է մեզ համար միասին ապրել, ամենուրեք մեզ համար նեղ է, ամեն տեղ մենք օտար ենք:

Իմաստունները սուր մտքեր են հնարում, իսկ յիմարները նրանց քարթում են:

—Նպատակը և միջոցը—պայմանական հասկացողութիւններ են, նրանց մարդն է հնարել: Արարիչը այդ չգիտէր: Ստեղծուածը ինքն իր համար նպատակ է: Կեանքը ոչ նպատակ է, ոչ էլ միջոց: Կեանքը իրաւունք է:

—Անցեալը մարդու հոգու ծննդավայրն է: Երբեմն մեզ պատում է երբ ևիցէ մեր վերապրած զգացմունքների մասին վիշտը, նոյն իսկ վիշտ անցած ցաւի համար:

—Աշխարհը երկու մասի է ճեղքուած, արօհուած: Որովհետեւ բանաստեղծի սիրտը աշխարհի կենտրոնն է, նա էլ երկուսի է պատահուած. ով պարծենում է նրանով, որ ամբողջական սիրտ ունի, նրա սիրտը պօղաթիկ նրբափոփոցային սիրտ է: Իմ սրտի միջով անցաւ աշխարհի մեծ տրոհումը, պատահուածքը:

Միշտ արն ափն, ինչ կարող ես անել և ինչի համար բնութիւնը քեզ ոյժ է տուել, ինչպէս կեանքի մէջ: Նոյնպէս արուեստի մէջ: Մարդի ամենից զժբազդ անէծքներին պատկանում է այն, որ նա արհամարհում է բնութեան իրան շնորհած ձիրքերը և ամենաթանկագին բան համարում է ամենից պակաս մատչելի բաները: Եթէ ազամանդները և գոհարները չգտնուէին ծովերի յատակում և լեռների լեռքում, նրանք թանգ չէին լինի:

Նա բնաւորութիւն ունի, ով ապրում է որոշ աշխարհահայեցողութեան յայտնի շրջանում, կարծես ինքն իրան նոյնացնում է նորա հետ և երբէք հակասութեան մէջ չէ ընկնում իր զգացմունքներին

և մտքերի հետ. շատ աչքի ընկնող մարդկանց մասին ամբողջը չի կարող որոշել, արդեօք նրանք բնաւորութիւն ունին: Նա չի տեսնում այն հոգևոր շրջանները, որոնց մէջ նրանք պատում, դառնում են:

— Ոչ մի մարդ չի մտածում. միայն երբեմն ակամայից մի բան է ընկնում նրա գլուխը, և այս նա անուանում է մտքեր և սրանց՝ մտքերի միմեանց հերթով հետևումը մտածողութիւն: Ոչ մի մարդ չի մտածում, ոչ մի փիլիսոփայ չի մտածում, ոչ Շելլինգը, ոչ էլ Հեգելը չեն մտածում: Նրանց փիլիսոփայութիւնը—օգ է և ջուր, ինչպէս երկրի ամպերը: Հպարտ և հաստատ լողում են նրանք ձեղ վրա, իսկ հեռեկալ արշալոյսը կը դարձնի նրանց սկզբնական ոչնչի:

— Աստուած առ հասարակ հեշտացնում է համեստներին համեստութեան և ուրիշ նման առաքինութիւնների խնդիրը: Դիւրին է ներել թշնամիներին, երբ բաւական իեղբ չունիս նրանց փասելու համար, և դիւրին է պղկաւոր քիթ ունեցող մարդուն ողջախոս լինել:

ԲՆՈՒԹԻՒՆ

Միթէ միևնոյն չէ, ինչպէս կատարել կեանքի ճանապարհորդութիւնը ձիով թէ ոտով կամ ջրով: Վերջը մենք ամենքս պիտի ընկնենք այն պանդոկը, այն անպիտան պանդոկը, ուր դուռը բացուում է բահով, ուր այնպէս նեղ է, և այնպէս ցուրտ այնպէս մութ, բայց սրտեղ կարելի է այնպէս լաւ քնել:

Եւ չհաւատամ անմահութեան, ես, որի սիրտը աւելի խոր ու աւելի խոր տարածում է իւր արմատները անցեալի և ապագայի հեռավորագոյն դարերի մէջ, ես, որ մէկն եմ ամենից յաւիտենական մարդկանցից, որի իւրաքանչիւր շունչը յաւիտենական կեանք է, իւրաքանչիւր միտքը—յաւիտենական աստղ:

Մահը սարսափելի է նրանց համար, որոնք ճանաչում են միայն անցեալը և ապագան և որոնք ներկայի իւրաքանչիւր վայրկենին չգիտեն վերապրել յաւիտենականութիւնը: Երբ նրանցից խլում են ուժով երկու նեցուկները՝ տարածութիւնը և ժամանակը, այդ մարդիկ խորասուզւում են յաւիտենական ոչնչի մէջ:

—Միթէ երազները պակաս իրական են քան ինքը իրականութիւնը:

—Ես սիրում եմ ծովը, ինչպէս իմ հոգին: Երբեմն ինձ թւում է, որ ծովն է իսկ իմ հոգին:

—Աստղերը սիրող, համակրող էակներ չեն, այլ գիշերուայ փայլուն ուրուականներ, յաւիտենական պատրանքներ մտածուած, հնարած երկնքում, ոսկի սուտ կապոյտ, լազուր ոչնչի վրա:

—Երեխաները մեզնից փոքր են: Նրանք դեռ յիշում են, ինչպէս նրանք իրանք ծառեր, թռչուններ են եղել, և կարող են դեռ նրանց հասկանալ, իսկ մենք ծեր ենք, մենք մեր գլխում շատ հոգուեր ունինք, իշաւաբանութիւն՝ իւրիսպրուգենցիա և վատ ոտանաւորներ:

—Ինչպէս մեծ բանաստեղծը—բնութիւնը չէ սիրում կտրուկ, սուր փոխանցումներ: Ինչպէս մեծ բանաստեղծը, բնութիւնը խիստ աննշան միջոցներով համնում է վիթխարի էֆֆեկտների. նա ունի միայն—արև, ծառեր, ծաղիկներ, ջուր և սէր: Ի հարկէ, երբ սրտումս էր չկայ, այն ժամանակ արևը գունդ է այսքան ու այնքան մղոն տրամագծով, ծառերը պէտք են միայն վառելու համար, ծաղիկները բաժանուում են առէջքների և ջուրը թաց է:

ԱՐՈՒԵՍ

Արուեստի մէջ ձեռն—ամեն ինչ է, բովանդակութիւնը—ուշիւն: Դերձակ Շտաուբը նոյն փողն է առնում սերտուկի համար, երբ նրան հայթհայթում են մահուղը և այն ժամանակ, երբ նա ինքն է մահուղը հայթհայթում:

—Երաժշտութիւնը—արուեստի վերջին խօսքն է, ինչպէս մահը—կեանքէ վերջին խօսքն է:

—Ինչ է արուեստի մէջ բարձրագոյնը. այն, ինչ որ կեանքի բոլոր արտայայտութիւնների մէջ բարձրագոյնն է՝ ոգու գիտակցական ազատութիւնը:

—Մեծ արուեստագէտը կարող է երբեմն վատ բան ստեղծել, բայց երբեք աւելորդ բան չի ստեղծի:

—Արուեստագէտը այն երեխան է, որի մասին պատմում է հէքլիսթը, որի ամեն մի կաթիլ արցունքը ազամանդի է փոխում:

—Միայն տաղանդ ունեցող արուեստագէտը մինչև կեանքի վերջը պահպանում է ստեղծելու իւր ձգտումը. նրան ծակում է փառասիրութիւնը. նա զգում է, որ շարունակ կատարելագործում է, կատարելութեան է ձգտում. բայց հանձարը միանգամից ստեղծում է վեհա-

գոյն բան. նա գո՛ւ է. նա արհամարհում է աշխարհը և տուն է գնում, ինչպէս Շէքսպիրը Ստրատֆորդ, կամ ծիծաղելով և դատելով, զբօսնում է իտալացոց բուլվարի վրա (բուլվար դէզիտալիէն), Պարիզում, ինչպէս Րոսսինին:

—Գնահ Հոովա: Այնտեղ դու կը բարձրանաս մինչև Րաֆայէլի իդէալականութեան հասկացողութիւնը:

—Րաֆայէլը զմայլուած է կաթոլիկ քրիստոնէութեամբ, մի կրօնով, որ արտայայտել է ոգու կռիւը նիւթի հետ, երկնքի կռիւը երկրի հետ, որ նպատակ ունի երկրի և նիւթի նուաճումը:

—Երաժշտութեան էութիւնը—յայտնութիւնն է: Երաժշտական կրիտիկան յայտնութեան մասին զրուած վարդապետութիւնն է:

—Բանաստեղծը փոքրիկ արարիչ է, նա նման է Աստուծուն և նրանով, որ ստեղծում է իւր մարդկանց իւր պատկերի համաձայն:

—Բանաստեղծութիւնը մարդի հիւանդութիւնն է: Այսպէս մարգարիտը ոստրէի հիւանդութիւնն է:

—Բանաստեղծը պէտք չէ անձնատուր լինի իւր անձնականութեան, նա պէտք է ամեն բան զրելու կարողութեան մէջ լինի:

—Միայն մեծ բանաստեղծը կարող է իւր ժամանակի պօէզիան հասկանալ:

—Անցեալի պօէզիան աւելի դիւրին է հասկանալ:

—Աւելի յիմար բան չկայ այն հարցից թէ ով է երկու բանաստեղծներից աւելի մեծ: Կըրակը կրակ է: Նրան չի կարելի որոշել կշռով, ունցիաներով:

—Քնարական երգերը բոլոր շրջաններումն էլ հաւասար են, ինչպէս սոխակի երգերը բոլոր գարուններին:

Լաւագոյն քնարական պօէզիան—գերմանականն է, այժմ ազգերը քաղաքականութեամբ են զբաղուած, նրանք ժամանակ չունին, բայց կըզայ ժամանակ, երբ բոլոր ազգերը կհամախմբուին կանաչ անտառում և կերգեն, և խօսակը կլինի վատաւոր, և առաջնութեան դավին կտրուի գերմանացիներին:

Երկինք են բարձրացնում, գովաբանում այն դրամատուրգին, որ հանդիսականի աչքերից արտասուք է կորզում. այդ տաղանդը նա բաժանում է սոխի հետ:

Գերմանացին թատրոն է գնում արտիստների խաղին նայելու և նրա մասին դատելու, ֆրանսիացին պիէսան տեսնելու, որ տպաւորութիւններ ստանայ:

—Ֆրանսիական դերասանները լաւագոյններն են աշխարհիս վերայ: Բոլոր ֆրանսիացիք ի ծնէ դերասաններ են: Նրանք դիւրին կերպով են մտնում ամեն մի դերի մէջ:

—Համէտի փոքրոգի բնաւորութիւնը լրացնելու համար, Շէքսպիրը կատակաբան դերասանների հետ նրա զրոյց անելիս, նրան թատրոնական լաւ կրիտիկոս է դուրս բերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մեծութիւնը, որով փայլում էր Բեօրնէի դէմքը, այն գաղտնի մեծութիւնը չէր, որ մենք տեսնում ենք ծածուկ կերպով ամբոխի մէջ երևացող թագաւորի կամ հանճարի դէմքի վրա. այս այն յեղափոխական, վիթխարի մեծութիւնն էր, որ երևում է թեկնածուների դէմքերի վրա: Նորա շարժումների, քայլուածքի մէջ կար ինչ որ հաստատ, որոշ, բնորոշ բան: Հոգևոր մրրիկը արտասովոր մարդու մէջ էլէկտրականօրէն ազդում է երիտասարդ, տակաւին չբացած հոգիներին վրա: Բեօրնէի աչքերից ցայտած կայծերը դիպան ինձ: Ես երբէք չեմ մոռացել այդ կայծերը:

Վիլհելմ Շլեգելը հասաւ իր փառքին միայն այն անուր յանդգնութեամբ, որով նա յարձակուամ էր գերական հեղինակութիւնների վրա: Նա պոկում, վար էր առնում դափնեայ պսակները հին կեղծամբերից և դորա համար շատ փոշի հանեց: Նորա փառքը—սկանդալի բնական դուստրըն է *):

Իմ «Երգերի գիրքը»—այս տպագրուած գրծանոց է, հոգեկան հիւանդների տուն:

Գրիմի գերմանական բերականութիւնը—հսկայական գործ է: Այդ գոթական տաճար է, ուր Գերմանիայի բոլոր ցեղերը, որպէս վիթխարի երգեցիկ խմբեր, իւրաքանչիւրը իւր բարբառով, աղօթքներ են վերառաքում դէպի երկինք:

—Հոռմորը, ինչպէս պատատուկ փարում է ծառի շուրջը: Առանց բունինա պէտք չէ:

*) Իսկ մեր կեանքի մէջ «անուն» հանած զանազան «ականները» գուրումնների լանակից մթթէ նոյն մեթոդին չէին հետևում՝ սկանդալներ սարքելու և թող փչելու մեթոդին, իհարկէ, յոգուտ իրենց գրպանի: Բայց, փառք Աստուծոյ, բոլոր սկանդալիստների և բէկլամիստների վերջը շատ տխուր է լինում, նոյնը եղաւ մեր բէկլամիստների հետ: Ժողովրդի արհամարհանքն և պատմութեան նախատինքն է նրանց բաժինը: Ծ. Թ.

—Երբ քննադատի աչքերը մթագնած են արցունքով, նրա կարծիքը նշանակութիւն չունի:

—Գրականութեան պատմութիւնը մեծ դիւարան է, ուր իւրաքանչիւրը փնտրում է իւր մեռածներին, որոնց նա սիրում է և որոնց նա իրան հարազատ է զգում:

—Գրականութեան մէջ, ինչպէս հիւսիսային Ամերիկայի վայրենի անտառներում, որդիք սպանում են հայրերին, երբ նրանք ծեր և թոյլ են դառնում:

✓ —Գրականութեան մէջ, ինչպէս քաղաքականութեան մէջ, ամեն ինչ շարժում է ազդեցութեան և հակազդեցութեան, ակցիայի և ինքնակցիայի օրէնքով:

✓ —Գրականութեան պատմութիւնը այնպէս դժուար է գրել, ինչպէս բնական պատմութիւնը: Այստեղ, ինչպէս և այնտեղ, միայն աչքի լինկնող երևոյթներն են ինկատ առնում, մինչդեռ ջրի փոքրիկ բաժակի մէջ ապրում է հրաշալի կենդանիների մի ամբողջ աշխարհ, որոնք նոյնքան երևան են հանում Աստուծու ամենակարող զօրութիւնը, որքան և մեծ, վիթխարի անասունները: Այսպէս, ամենափոքր ժողովածուն երբեմն պարունակում է հարիւրաւոր բանաստեղծիկներին, որոնք ուշադիր հետախուզողի համար նոյնքան հետաքրքրական են, որքան գրական փղերը: Աստուած մեծ է...

Ոգու ստեղծագործութիւնները անանց են: Բայց կրիտիկան անցաւոր է. նա ծնւում է ժամանակի հայեացքներից, միայն նորա համար ունի իր նշանակութիւնը և նորա հետ գերեզման է իջնում: Իւրաքանչիւր դար, նոր մտքեր ստանալով, ստանում է նոր աչքեր, և շատ նոր բան է տեսնում մտքի հին ստեղծագործութիւնների մէջ:

Ամեն ոք գրքի մէջ ուրիշ բան է գտնում: Թարգմանիչը պէտք է շատ տաղանդաւոր լինի և հեղինակին հարազատ, ազգակից ոգի ունենայ:

Գրական գողութեամբ պարապողները աւելի վատ և ստոր են մեծ ճանապարհի վրայի աւազակներից, որոնք քաջաբար գործում են կախուրեւ վտանգը գրկած, միշտ աչքի առաջ ունենալով. իսկ սրանք՝ գրական գողերը օգտուելով մամուլի օրէնսդրութեան թերութիւններից երկչոտ ապահովութեամբ, անպատիժ կերպով զրկում են աղքատ, խեղճ գրողին տաժանելի, իւր հալալ քրտնքի վաստակից:

Դօն-Քիշօտի և Սանխօ-Պանչօյի խօսակցութեան բնաւորութիւնը կարելի է այսպէս որոշել, որ Դօն-Քիշօտը միշտ խօսում է Րոսինանտի բարձրութիւնից, իսկ Սանխօն իւր ցած, կարճահասակ էշի վրայից:

Գեօթէն, Շէքսպիրը և հոմերոսը իրանց վէպի կամ դրամայի ամեն մի անձի մէջ տեսնում են զլիաւոր անձ: Մեծ բանաստեղծների երկերի մէջ չկան երկրորդական անձեր:

Կրիտիկոսները Շէքսպիրի գրուածքների մէջ չեն տեսնում և դորա համար պախարակում են նրան երեք միութիւնների՝ ժամանակի, տեղի և գործողութեան բացակայութեան պատճառով: Մինչդեռ նրանք կան նրա գործերի մէջ. նրա միակ տեղը—երկրագունդն է, նորա միակ ժամանակը—յաւիտենականութիւնն է նորա միակ գործողութիւնը—մարդկութեան կեանքը:

Ժօրժ-Ջանդի գրուածքների մէջ կայ արդարութիւն, բնութիւն, ճաշակ, գեղեցկութիւն, ոգևորութիւն և այս բոլորը շողկապուած է ու միացած հարմօնիայով:

—Եթէ պատմաբանը երկար հետախուզութիւններից և խորհրդածութիւններից յետոյ պէտք է խօսքի դիւթական հմայքով դէպի կեանք կոչի մեռած անցեալը, որ նա, իբրև կենդանի, մեր առաջ կանգնի, այն ժամանակ Միշլէն կատարել է այդ գործը:

Վիկտոր Հիւգօն—առաջնակարգ հանճար է: Երբեմն ինձ պաշարում է մի արտառոց միտք,

որ Հիւգօն Շէքսպիրի ժամանակակից մի անգլիացի բանաստեղծի ուրուականն է, մեռած բանաստեղծ, որ եկել է գերեզմանից ուրիշ աշխարհ և ուրիշ դար, որ գրէ մի քանի երկեր, ապահով Շէքսպիրի մրցումից:

✓ Վիկտոր Հիւգօն—Ֆրանսիայի ամենամեծ բանաստեղծն է, նա Գերմանիայում անգամ առաջնակարգ բանաստեղծների շարքում կլինէր: նա ունի երեակայութիւն և զգացմունք և տակտի բացակայութիւն, որ միայն գերմանացիների մօտ կարելի է գտնել: Նորա ոգուն պակասում է ներդաշնակութիւն: Նորա մոտոսն երկու ձախ ձեռք ունի:

Շիլլերը գրում էր յեղափոխութեան մեծ գաղափարների համար: Նա ոչնչացնում էր հոգեւոր բաստիլիաները, նա շինում էր ազատութեան տաճարը: Նա սկսեց ատելութեամբ դէպի անցեալը, որ մենք տեսնում ենք նորա «Աւազակների» մէջ, ուր նա, որպէս փոքրիկ տիտան՝ հսկայ, դուրս վազեց դպրոցից, և խմելով, ջարդեց Արամազդի՝ Իւպիտերի ապակիները: Նա վերջացրեց այն սիրով դէպի ապագան, որ ծաղկում է արդէն «Դօն-Կարլոսի» մէջ, որպէս ծաղիկների մի անտառ. նա ինքը այն մարկիզ Պօզան է, որ լինելով մարգարէ և զինւոր, պայ-

քարում, կուռում է այն բանի համար, որ քարոզում է, և սպանիական թիկնոցի տակ ծածկում է ամենից ազնիւ մի սիրտ, որ երբեք է սիրել է և տառապել Գերմանիայում:

✓ Բնութիւնը ցանկանում էր տեսնել, ինչպէս նա կերեայ, և ստեղծեց Գեօթէին:

— Գեօթէն մեծ մարդ է մետաքսեայ սիւրտուկով:

✓ — Գեօթէն—բանաստեղծութեան Սպինոզան է: Սպինոզայի վարդապետութիւնը վայր ձգեց իւր վրայից իւր մաթեմատիքական կեղեք և սաւառնում է մեր շուրջը Գեօթէի երգով: Ներդաշնակ բանաստեղծութիւնը հմայում է կենդանի սիրտը, ինչպէս սիրահարների փաղաքշանքները: Պօսքը քեզ գրկում է, իսկ միտքը համբուրում:

Ֆաուստը—գերմանացիների աշխարհիկ Աստուածաշունչն է: Գեօթէի ստեղծագործութիւնները զարդարում են Գերմանիան, ինչպէս գեղեցիկ արձանները զարդարում են պարտէզները: Բայց նրանք արձաններ են: Նորանց վերայ կարելի է սիրահարուել, բայց նրանք ամուլ են: Գեօթէի ստեղծագործութիւնները գործ չեն արտադրում, ինչպէս Շիլլերինը: Գործը—խօսքի զաւակն է, Գեօթէի գեղեցիկ խօսքերը անզաւակ են:

—Այն, ինչ որ այս քննադատները բծեր են համարում մեծ արեգակի՝ Գեօթէի վրա—իսկապէս ծաղկած անտառներ, արծաթափայլ առուակներ, վեհապանծ լեռներ, ծիծաղկոտ հովիտներ են:

—Լեսսինգը մարգարէ է, երբորդ ուխտի նախակարապետն է:

—Լեսսինգի բոլոր գրուածներում ապրում է նոյն մեծ սոցիալական զաղափարը, նոյն առաջադիմող մարդասիրութիւնը, մարդասիրութեան նոյն կրօնը:

Լեսսինգի հումորը—Ֆրանսիական այն փոքրիկ շնիկն է, որ վազում է իւր ստուերի ետեւից. նրա հումորը գերմանական մեծ կատու է, որ խաղում է մկան հետ և յետոյ նրան խեղդում:

Բեօրնէն այն գրողներից էր, որոնք միայն արտակարգ ոգևորութեան՝ էքստազի մէջ են գրում:

—Բեօրնէն մեծ հայրենասէր էր, գուցէ ամենից մեծը նրանցից, որոնք խորթ—մայր Գերմանիայի կրծքից ներս են ծծել կրակոտ կեանք և դառն մահ:

—Մտածողի՝ փիլիսոփայի կողքին պրոգա-

յիկ, չոր ու ցամաք մարդը, որ հանգիստ կերպով իւր գործով է պարապում, նման է այն եզան, որ հանգիստ կերպով որոճում է մսուրի մօտ, որի մէջ Փրկիչը, աշխարհ փրկող գաղափարն է լոյս տեսնում:

Կադմոսը բերում է Յունաստան փիւնիկէական այբուբէնը, զրելու արուեստը—այդ այն վիշապի ատամներն են, որ նա ցանեց. նրանցից առաջ եկած սպառազինուած մարդիկ փոխադարձաբար ոչնչացնում են միմեանց:

—Թոյն պատրաստող մարդը պիտի ապակեայ ձեռնոցներ հագնի:

—Որպէս խելացի մարդիկ յաճախ շատ յիմար են լինում, նոյնպէս և յիմարները երբեմն շատ խելացի են լինում:

Ժամանակը խաղաղացնում, ազդեցութիւն է գործում մեր մտածողութեան եղանակի և զգացմանց վրայ այն հանգամանքի շնորհիւ, որ մենք յաճախ գործ ենք ունենում բոլորովին հակասական, միմեանց հակառակ իրերի հետ: Քաղաքապահ զինուորը, որ հսկում է կանկանի վրայ, վերջ ի վերջոյ շատ էլ անվայելուչ, աննպատակ չէ գտնում այն և ինքը կցանկար պարել անգամ այդ պարը: Բողոքականը, կաթոլիկութեան հետ երկար մաքառելուց յետոյ, այլ-

ևս նրա մէջ աշխարհի էլ սարսափելի բան չէ որոնում և չէ տեսնում և գուցէ յօժարութեամբ կլսէր մի կաթողիկական պատարագ։

Աշխարհում կան վսեմ հոգիներ, որոնք ամեն սեռակ նիւթական փառքից և վայելքներից բարձր են կանգնած, որոնք զահի վրայ նայում են օրպէս կարմիր թաւշով պատած աթոռի վրայ։ Կան նաև ստոր հոգիներ, որոնց համար ամեն իրէական բաներ աննշան են թւում և որոնց համար կախաղանի երկաթէ անուրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկաթէ փողպատ։ Նրանք չեն վախենում երկաթէ փողպատից, եթէ միայն այդ միջոցով իրանց շուրջը կարող են ժողովել հասարակութիւնը, իսկ հասարակութեան վրայ նրանք ազդում են յանդգնութեամբ, որ նրանք ձեռք են բերել ըուտինայով։

Նրէութիւնը ազնուապետութիւն՝ արիստոկրատիա է, մի Աստուած ստեղծել է աշխարհը և կառավարում է այն, բոլոր մարդիկ Նորա որդիքն են, բայց հրէաները Նորա սիրելիներն են և նրանց երկիրը Նորա ընտրեալ երկիրն է։ Նա միապետ է, հրէաները ազնուականներ, իսկ Պաղեստինը Աստուծոյ սիրելի երկիրն է։

Քրիստոնէութիւնը ժողովրդապետութիւն դե-

մօկրատիա է. մի Աստուած ստեղծել է ամեն ինչ և կառավարում է ամեն ինչ, բայց բոլոր մարդկանց Նա սիրում է հաւասարապէս և բոլոր երկիրները պահպանում է հաւասարապէս։ Նա արդէն ազգային Աստուած չէ այլ ևս, այլ համաշխարհային։

Հրէաները միակ ազգն էին, որ Եւրոպայի քրիստոնէութիւն ընդունելու ժամանակ պահպանեցին իրանց հաւատի ազատութիւնը։

Հնդիկների վիպական բանաստեղծութիւնները նրանց պատմութիւնն են. բայց մենք կարող ենք օգտուել նրանցից, որպէս պատմութիւններից միայն այն ժամանակ, երբ կգտնենք օրէնքներ, որոնց շնորհիւ հնդիկները իրօք բանաստեղծական ֆանտաստիկական էին դարձնում։ Այդ չի աջողուել մեզ մինչև այժմ յոյների առասպելաբանութեան վերաբերմամբ. սակայն այստեղ բանը աւելի դժուարանում է, որովհետև յոյները այն ամենը, ինչպէս որ իրօք կատարուած է եղել, միշտ ձևարուեստական ձևով առասպել էին մշակում, դարձնում, որ և աւելի ու աւելի որոշ էր դառնում։ Հնդիկների մէջ ընդհակառակն, ֆանտաստիքական մշակութիւնը՝ կերպարանափոխութիւնը, շարունակում է խորհրդանշան մնալ, որ անվախձանը, անսահմանն

է որոշում և որին բանաստեղծի ֆանտազիան չի կարող աւելի որոշ ձևեր տալ պլաստիկ կերպով:

Հնդիկը կարող էր միայն հսկայական վէպեր ստեղծել, որովհետև նա, որպէս առ հասարակ պարզ դիտողութեան տէր մարդ չէր կարող աշխարհի ընդհանուր կազմից որ և է մի մաս կտրել: Ամբողջ աշխարհը նրա համար վիպական բանաստեղծութիւն է, որի մէջ «Մահաբարատան» մի գլուխ է կազմում միայն: Համեմատեցէք հնդկական միստիկան՝ խորհրդագրածութիւնը մերի հետ. մերը վարժում է սուր միտքը, նրբամտութիւնը նիւթի լուծման, բաժանման և միացման համար, բայց նա չի կարող գաղափար կազմել: Պարզ դիտողութեան գաղափարները մեզ համար բնաւ անծանօթ բաներ են: Հնդկական մուսան հէքիաթները երազող, ցնորքների մէջ խորասուզուած իշխանուհին է:

Որպէս առհասարակ իւրաքանչիւր մարդ զգայական աշխարհում նայում է որոշ առարկայի վերայ իւր հայեցակէտով, նոյնպէս և իւրաքանչիւր մարդ մի յայտնի, որոշ գրքի մէջ տեսնում է մի բան, որ մի ուրիշը այլ կերպ է տեսնում: Հետևաբար թարգմանիչը պէտք է

խիստ խելացի և տաղանդաւոր մարդ լինի, որովհետև նա անհրաժեշտօրէն պէտք է թարգմանելի գրքի մէջ որոնի և տեսնի ամենից կարևոր և լաւագոյն բաները՝ այդ բոլորը ուրիշներին հաղորդելու համար: Բնագրի բառերը, մարմնական՝ արտաքին, միտքը կարող է իւրաքանչիւր ոք թարգմանել, ով որ քերականութիւն է սովորել և մի բառարան ձեռք բերել: Բայց իւրաքանչիւր մարդ չի կարող թարգմանել ոգին, հասկանալի դարձնել այն: Թող այդ բանը ի նրկատի ունենայ վալտեր Սկոտտի բովանդակութիւնը՝ վէպերի այն չոր ու ցամաք, պրօզայիկ թարգմանիչը, որ այնպէս պարծենում է իւր թարգմանութեանց ճշտութեամբ: Ինչ է նշանակում թարգմանել, ճշգիւ տալ բնագրի ոգին՝ կարելի է ամենից լաւ տեսնել Փօրստերի «Մակունտալայի» կրկին, երկրորդ թարգմանութիւնից:

Բովանդակների ժամանակ սիրում էին ծաղիկը միայն իւր հոտի, բուրման համար. մեր ժամանակում մենք սիրում ենք ծաղկի պտուղը: Այս պատճառով է և մեր ձգտումը դէպի գործնականը, դէպի պրօզան, դէպի կոշտը և առօրէականը:

Արուեստի մէջ նոր շրջան է երևան եկել:

Բնութեան մէջ նորն օրէնքներն են գտնուում, որոնցով մեր մարդկային ոգին ևս կառավարուում է, նրանց մարդացնում են, մարդկային ոգու մէջ բնութեան օրէնքներն են գտնուում—մագնիսականութիւն, էլէքտրականութիւն, ձգողական և վանողական բեւեռներ (Հայնրիխ Ֆօն-Կլայստ): Գեօթէն ցոյց է տալիս բնութեան և մարդու մէջ փոխադարձ յարաբերութիւն. Շիլլերը կատարելապէս ոգեպաշտ է, նա հեռացնում է բնութիւնից, նա Կանտի էսթետիկայի կողմնակից է:

Երբ ես կարդում եմ համաշխարհային պատմութիւնը և ինձ զարմացնում է որ ևէ սխալ գործութիւն կամ որ ևէ երևոյթ, ես կցանկայի երբեք այդ բաների մէջ տեսնել կնոջը, որպէս գաղանի զրդիչ ծածկուած այդ գործերի ետևում—կանայք կառավարում են աշխարհը, թէև «Moniteur»-ը միայն տղամարդկանց անուններ է մէջ բերում: Նրանք կազմում, շինում են պատմութիւնը, թէպէտև պատմաբանը միայն տղամարդկանց անուններ է իմանում: Հերոզոտի պատմութեան սկիզբը խիստ սրամիտ է:

ՍԷՐ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Սիրոյ բացատրութեան ժամանակ պէտք է ընդունել բնագիտական երևոյթը՝ ֆենօմենը կամ պատմական փաստը: Արդեօք այդ միայն լոկ համակրութիւն է, որպէս յիմար մագնիսը դէպի ինքն է քաշում կոպիտ երկաթը, կամ գուցէ այդտեղ պէտք է մի նախնական պատմութիւն ընդունել, որի ազօտ գիտակցութիւնն է պահպանուել մեր մէջ և արտայայտուում է անբացատրելի ձգողական և վանողական ոյժերով:

—Որ Քսանտիպպէսի ամուսինն այնպիսի մեծ փիլիսոփայ դարձաւ, խիստ զարմանալի է: Այնպիսի հայհոյանքների, կռուի ու աղմուկի մէջ՝ դեռ մտածել... Բայց զրեւ արդէն նա բնաւ չէր կարող, այդ անհնարին էր, Սոկրատէսը իրանից յետոյ և մի գիրք չի թողել:

—Մահմեդականներն որոշակի ասում են, որ կինը երբէք զրախտ չի գնալ, Մահամէդը նրան դուրս է վանել այնտեղից: Գուցէ նա կարծում էր, որ զրախտը զրախտ չէ այլևս, եթէ իւրաքանչիւր մարդ իւր կնոջը կրկին այնտեղ կգտնէ:

—Իւրաքանչիւր ամուսնացող նման է Ադրիական ծովի հետ ամուսնացող դոժին, նա չը գիտէ ինչ կայ այնտեղ—գանձեր, մարդարիտ, հրէշներ, անծանօթ մըրիկներ:

— Գերմանիայի կանայք վտանգաւոր են ի-
րանց յիշատակարաններով, որ ամուսինը կարող
է գտնել նրանց մօտ:

— Գերմանական ամուսնութիւնը իսկական ամուսնութիւնն է։ Այլընչ է թէ կին ունի, այլ աղախին և մինչև անգամ իւր ընտանիքի շրջանում նա շարունակում է իւր առանձնացած ամուրի կեանքով ապրել։ Ուստի ես գրանով չեմ ցանկանում ասել, որ նա տէր է, այլ ընդհակառակն յաճախ նա իւր աղախին ծառան է և նրա ստրկական ոգին իւր տան մէջ չի լքանում։

— Երիտասարդութեան ժամանակ սէրն աւելի փոթորկալից է, բայց ոչ այնքան զօրեղ, ոչ այնքան ամենակարող, որպէս հետագայ տարիներում: Երիտասարդութեան ժամանակ սէրն այնքան յարատեւ չէ, որովհետեւ այդ ժամանակ մարմինն էլ սիրում է, մարմնական ցանկութիւններ է տենչում սիրոյ մէջ և հաղորդում է հոգուն իւր արեան ամբողջ ուժգնութիւնը, տենչանքի ոյժի ամբողջ առատութիւնը: Ապագայում, երբ այդ ոյժը թուլանում է, երբ արիւնն աւելի դանդաղօրէն է հոսում երակներէ մէջ, երբ մարմինն այլևս սիրահարուած չէ—այն ժամանակ միայն հոգին է սիրում, անմահ հոգին, և որովհետեւ յաւիտենականութիւնը նրա տրամադրութեան տակն է, ուստի նա այնքան էլ տկար և անկայուն չէ, որպէս մարմինը: Նա չի շտապում և սիրում է արդէն ոչ այնքան բուռն, ուժգին կերպով, բայց աւելի յարատեւօրէն, աւելի ևս խոր և գերմարդկային կերպով:

ՀՀ Ազգային գրադարան



NL0139593

